



ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԶՈՐԱՑ ՔԱՐԵՐ - ՔԱՐԱՀՈՒԶ

ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՔՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

2013 N 8

ԳՈՐԻՍ

ԳՊՀ Հրատարակչություն

2013

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մ. Զիլֆուղարյան (նախագահ)` իրավաբանական գիտությունների թեկնածու, Ե. Ազարյան՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, Մ. Սարգսյան՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, Օ. Խնկիլյան՝ պատմական գիտությունների դոկտոր, Մ. Կարապետյան՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Գր. Գրիգորյան՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Գ. Ստեփանյան՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Թ. Հայրապետյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու, Բ. Թենոսյան՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շ. Դավթյան՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ե. Մկրտչյան՝ բանասիրական գիտությունների դոկտոր, Լ. Ներսիսյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ն. Հովսեփյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

Գլխավոր խմբագիր՝

Գլխավոր խմբագրի տեղակալներ՝

Մ. Զիլֆուղարյան

Ս. Հախվերդյան, Գ. Ստեփանյան,

Գ. Հարությունյան, Ք. Աղամյան

ՄԻ ՀՈՒՐՃԱՐՁԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Օնիկ ԽԱԿԻԼՅԱՆ
ԳՊՀ Պատմության և իրավագիտության
ամբիոնի դասախոս, պ.գ.դ., ԱՀՀԿ գիտաշխատող

1975թ. Սիսիանից 17 կմ հարավ գտնվող Թանահատի վանքի (ԽԴար) վերականգնման աշխատանքների ընթացքում հայտնաբերված սեպագիրը վկայում էր Արգիշտի Բ-ի՝ Ծուլուկու՝ Մեծ Հայքի իններորդ աշխարհի՝ Սյունիքի Ծղուկ գավառին համապատասխանող Երկիրը կատարած աղշավանքի մասին: Հին ծղուկցիների անցած պատմական ուղին լուսաբանող հուշարձանները բազմաթիվ են: Վերջիններիս շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Զորաքարերը, որը մշտապես գտնվել է հետազոտողների ուշադրության շրջանակներում: Նման հետաքրքրության պատճառը կարելի է արտահայտել Ա. Օլեսնիցկու խոսքերով. «բավական է առաջին իսկ պատահած քարը դնել բնության մեջ չհանդիպող առանձնահատուկ, արհեստական դիրքով, որպեսզի այն դառնա անցորդների ուշադրության առարկան և ցանկություն արթնացնի նրանց մեջ կռահելու վերջինիս նշանակությունը»: Այս միտքը լրացնում է Ա. Ա. Սպիցինը ասելով. «պեղելը ոչ սպորտ է և ոչ իսկ հաճույք. դա լուրջ աշխատանք է, հաճախ ծանր և միշտ պատասխանատու: Բավարար չէ իրեր գտնելը, հարկավոր է կռահել անձի միտքը, որը պատրաստել է հուշարձանը...»: Զորաքարերի դեպքում նման գնահատականը ավելի քան արդարացված է:

«Զորաց» կամ «Զորքի քարեր» և այլ անվանումներով հայտնի հուշարձանը գտնվում է Սիսիանից մոտ 3 կմ հյուսիս-արևմուտք՝ Գորիս տանող ճանապարհի ծախ կողմում ընկած. շուրջ 8 հա զբաղեցնող եռանկյունաձև հարթության վրա: Այն արևմտայան կողմից կտրված է խոր, դժվարամատչելի կիրճով, որով հոսում է Դառը գետակը, իսկ արևելքից հատող հարթավայրից սահմանագատված է տարբեր ծներ ու չափեր (մինչև 2-2,4մ) ունեցող, ուղղահայաց կանգնեցված, հյուսիսից հարավ ձգվող խոշոր ժայռակտորների շարքով: Վերջիններիս մի մասի վերին հատվածում՝ Երկկողմանի փորագրությամբ, 6-8 սմ տրամագծով անցքեր են բացված: Առանձին օրինակների վրա այդ անցքերը եզրին մոտ գտնվելու պատճառով կոտրված են: Շարքի գրեթե կենտրոնական մասում նույնանման խոշոր քարերով, հատակագծում հարցական նշանի տեսքն ունեցող (^o)ձվածիր կառույց է պատրաստված, այդ քարերի վրա անցքեր չեն բացված: Շրջանի կենտրոնական մասը զբաղեցնում է խոշոր չափերի երկխոց քարարկղ, որը ժամանակին ամբողջությամբ ծածկված է եղել տարբեր չափերի քարերից կազմված դամբարանաթմբով: Ներկայումս դամբարանաթմբի քարերի մի

մասը թափված է խցի մեջ, մյուսը հեռացված խցի կողքից: Քարարկողի ծածկասալերից երեքի վրա (դրանցից մեկը և միակը ողջ հուշարձանում կարմիր գույնի է) թափված անցքերը ցույց են տալիս, որ դրանք տեղաշարժվել են շարքով կանգնեցված կառույցից:

Քարաշարքից արևմուտք մինչև կիրճն ընկած ողջ տարածքը ծածկված է հատակագծում ուղղանկյուն, սեղանաձև և այլաձև կառույցների քարաշար պատերի ավերակներով, որոնց անշաղախ պատերի բարձրությունը տեղ-տեղ 1,8 մ է հասնում: Այս կառույցների միջև, ինչպես և անմիջապես դրանց տարածքում, այս ու այնտեղ, հողի մեջ պատրաստված են խոշոր քարարկողներ: Վերջիններիս ծածկասալերը հանված են, առանձին դեպքերում՝ ընկած դամբարանախցերի մեջ: Հուշարձանի հարավային մասում. նման դամբարաններին զուգահեռ կան վերգետնյա քարարկողներ. դրանցից հայտնաբերված նյութերը թվագրվում են մ.թ.ա. I հազ. I քառորդով: Այս դամբարանները, ինչպես և շրջանի կենտրոնում գտնվողը, ծածկված են տարբեր չափերի քարերից կազմված քարալիցքով: Ընդհանուր գծերով այսպիսին է հուշարձանի տեսքը, որն իր անվանք պարտական է շարքով ու շրջանաձև կանգնեցված քարերին:

Համաձայն նշանավոր ազգագրագետ Ե. Լալայանի և նրանից դեռ հինգ տարի առաջ Ար. Մելիք Շահնազարյանի վկայությունների՝ շրջակա ժողովուրդը համոզված է եղել, թե քարակույտերի տակ զորավարներ, իսկ կանգնեցված քարերի տակ զինվորներ են թաղվել, որի համար և հուշարձանը Ղոշուն-դաշ, այսինքն՝ զորքի քար են կոչել: Անվան նման ընդգծումը և Ե. Լալայանի կողմից անմիջապես դրան հաջորդող թարգմանությունը կարծես հուշում է դամբարանները ավերողների եթնիկ պատկանելությունը, որոնք ասել են, թե տեղ-տեղ փորելով՝ խեցանոթներ են գտել¹: Ասվածից դժվար չէ նկատել, որ իրականությունն արտացոլող այս պատմությունը առնչություն չունենալով ավանդությունների հետ, տպավորություն է ստեղծում, թե հուշարձանի անվանումը պարզապես «Զորքի քարի» թարգմանությունն է հանդիսանում, որը ոչ մի կերպ չի կապվում դամբարաններից հայտնաբերված խեցանոթների հետ: Անունը կարդարացվի, եթե պատմողները շեշտեին գենքեր, պաշտպանության միջոցներ և նման այլ իրեր գտնելը: Դժբախտաբար, հայկական անունների թարգմանությունները և դրանց տարածելը եղակի չեն: Օրինակի համար նշենք և Բյուրակնի Բինօյոլ թարգմանությունը, որից չի հետևում, թե մենք պետք է հրաժարվենք Բյուրակն անունից: Ամենայն հավանականությամբ, այս դեպքում ևս, գործ ունենք տեղական, բնիկ ավանդության անվան թարգմանության հետ: Բնականաբար, նման ենթադրությունը հանգեցրեց հայկական ավանդության որոնմանը, որը և երջանիկ պատահականությամբ

¹Տես Ազգագրական հանդես, Գ գիրք, Թիֆլիս, 1898, էջ 174-175: Տես նաև՝ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 263, 469, 470:

լսեցինք անցյալ դարի 70-ականներին Սիսիանի բնակչութի Զառե Կարապետյանից: Տարիքավոր կնոջ կցկտուր պատմածներից ուրվագծվեց հետևյալ պատմությունը:

Յայկական գեղեցիկ ավանդությունների շարքում տարօրինակ կերպով անհայտ մնացած այդ պատմության համաձայն՝ ուրախացող հարսանքավորների վրա թշնամիներ են հարձակվում, որոնք ցանկանում են առևանգել հարսին: Այդ պահին, սակայն, պատիվն ամեն ինչից վեր դասող նորահարսը և շուրջպար բռնած հարսանքավորները քարերի են փոխարկվում: Քարերի են փոխարկվում և շարքով կանգնած զինվորները: Նման ավաղությունները շատ խոր արմատներ ունեն և տարածված են տարբեր ժողովրդների մոտ, ինչը ցույց է տալիս հների հավատքը կերպարանափոխությունների հանդեպ: Տեղին է նշել, որ պատմահայր Խորենացին դա է ակնարկում, երբ խոսում է Շամիրամի և Նիոբեի մասին:

Խոսելով հուշարձանի անվան մասին՝ նշենք և վերջին ժամանակներս շրջանառվող Քարահունջը¹: Անվանափոխության առաջարկը, Ղոշուն-դաշից թարգմանված լինելու թյուր մտայնությունից բացի, պայմանավորված է նաև հուշարձանի նշանակությամբ, ինչպես և Քարահունջ և Սթոունհենջ անունների և դրանց իմաստների որոշ մերձակցությամբ: Ընդգծվում է նաև Գորիսի սահմաններում գտնվող Քարահունջի և Սիսիանի հուշարձանի միջև եղած ոչ մեծ հեռավորությունը: Յնարավոր այս կապը հիմնավորելու համար մատնանշվում է «քար» և «սթոուն» բառերի նույնիմաստությունը, ինչպես անգլերենում «հենջ» բառի բացակայությունը: Յեղինակների կարծիքով «հենջը» մերձենում է հայերենի «փունջ», «ձայն», «հնչել» բառերին և կարող է դրանց ձևափոխումը հանդիսանալ: Յարցի վերջնական պատասխանը թողնելով լեզվաբաններին՝ նշենք միայն, որ համաձայն «Webster's Illustrated Encyclopedia Dictionary», տպագրված «Tormont Publications Inc, 1990 Montreal, Canada», էջ 784, կարդում ենք, որ «Henge» նշանակում է նեոլիթի կամ բրոնզի դարաշրջանին պատկանող քարից կամ փայտից պատրաստված շրջանաձև ծիսական կառույց: Յուշարձանի բնութին համապատասխանող այս բացատրությունը չի համատեղվում և հուշարձանի նախնական «Սթանհենջ» անվանը, որը հիշատակված է XIIդ. պատմիչ անգլո-նորման Վասեի կողմից և թարգմանված իրու «կախված քարեր»²: Յետևաբար անվանափոխել հուշարձանը, գրկել այն տեղական արմատներից և դրանք վկայող ավանդությունից՝ հիմնավորելով այն սոսկ henge կամ hang դրանցից առաջնին հարմարեցրած հունջ-հունչ բառով, կարծում ենք, երերուն է և դրա հիման վրա տեսություն կառուցելն ու այն պաշտպանելը, երևի թե համարձակ փորձ է: Տեսության հիմնավորման

¹ Պարսամյան Է., О возможном астрономическом назначении мегалитических колец Ангелакота. Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներ, պրակ LVI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1985, ս. 101-103, Յերունի Պ. Յայերը և հնագույն Յայաստանը. հիմքերը հայոց. արքաեօսաստղագիտություն, լեզվաբանություն, հնագույն պատմություն, Երևան, 2006, էջ 71-72:

²Տես Խոկին Ջկ. , Սայտ Ջկ., Հազարամայի Տանի Ստունխենդյան, Մոսկվա, 1984, ս. 21:

համար, երևի թե ավելի համոզիչ փաստեր են հարկավոր, այլապես ստիպված կլի-նենք ընդունել, որ անհիշելի ժամանակներից արդեն քարահունջը հենց այդ անունն է կրել և այս հնագույն անունը անփոփոխ պահող քարահունջեցիները մ.թ.ա. XIXդ. հայտնվել են Սոլոբերիում որովհետև Սթոռնհենջը մ.թ.ա. XIXդ է թվագրվում (նախնական փուլը): Ինչ վերաբերվում է նախընտրելի «Զորաքարեր» անվանը, ապա այն ստեղծած բնիկները ապրել են այն ժամանակ, երբ շարունակելով հավատող կերպարանափոխություններին, ամբողջությամբ մոռացել էին հուշարձանի նշանակության մասին:

Հարց է առաջանում, թե ե՞րբ է կառուցվել հուշարձանը և ի՞նչ նշանակություն է ունեցել այն: Հուշարձանի նկարագրությանը և մեկնաբանմանը առաջինը անդրադարձել է ազգագագետ Ստ. Լիսիցյանը: Դիտարկումները հետազոտողին հանգեցրին այն կարծիքին, թե քարարկղերը (հողի մեջ խորացված) բնակարաններ են հանդիսացել, անցքերը բացվել են կենդանիների օգնությամբ քարերը տեղափոխելու համար, իսկ ձվածիր կառուցը՝ կենտրոնում տեղադրված դամբարանի համար, կրոնլեխ է եղել, ուր երևի ծեսեր են կատարվել¹: Շրջանաձև կառուցի՝ տաճար հանդիսանալու հնարավորությունը չբացառեց և հնագետ Կ. Քուշնարյովան՝ նշելով, թե, ըստ երևույթին այդտեղ անդրշիրիմյան պաշտամունքին առնչվող ծեսեր են կատարվել²:

Ասվածից դժվար չէ նկատել, որ հեղինակները շրջանաձև կառուցն ու կենտրոնի դամբարանը համաժամանակյա են դիտել, այլապես չէին գրի թե դա անդրշիրիմյան պաշտամունքին ծառայող տաճար է հանդիսացել: Այս կառուցները համաժամանակյա չէին, որովհետև դամբարանն ու այն շրջափակող կրոնլեխը, որի առանձին հատվածները երևում են դամբարանի քարե լիցքի տակ, թվագրվում են մ.թ.ա. X-VIIIդ., իսկ բնակատեղին ու շարքով կանգնեցված քարերն ու հարցականի ձևով դասավորված քարերը շատ ավելի վաղ են: Այդ են ցույց տալիս և դամբարանի ծածկասալերից երեքը որոնց վրա անցքեր են բացված: Այդ քարերը դամբարանը կառուցողները տեղաշարժել են շարքով կանգնեցված քարերի մոտից: Համոզիչ չէ և անցքերի առկայությունը քաշող ուժի հետ ապրելու միտքը ոչ միայն նրանով, որ անցքերը բացվել են հուշարձանի տարածքում, այլև նրանով, որ քարերը ծանր լինելով (բազալտի տեսակարար կշիռը՝ 60-3,11 ցույց է տալիս, որ քարերի մեջ մասը 4-8տ. և ավելի ծանրություն ունեն, մյուս կողմից առկա են և փոքր քարեր որոնց վրա նույնպես անցքերը են բացված, չնայած դրանք կարելի է հեռացնել 2-3 հոգով), չդիմանալով լարմանը՝ անմիջապես կկոտրեն քարի եզրի և անցքի միջև եղած նեղ շերտը: Ասվածը շոշափելի

¹ Лисициан Ст., Кошун-даш. Мегалитическое городище в Сисиане (Зангезур). Академия Наук СССР XLV Академику Н. Я. Марру. Изд. АН СССР, Москва, Ленинград, 1935, с 708-721.

²Տե՛ս Կոշնարեա Կ., Դревнейшие памятники Двина, Ереван, 1978.

դարձնելու համար մեկ օրինակ. կատարված փորձերը ցույց են տալիս, որ 32 տղամարդ ընդամենը 1,5տ. թետոնե զանգվածը հազիվ են տեղաշարժել 4 աստիճան թեքության վրա. հասկանալի է, որ կենդանիների ուժը օգտագործելու դեպքում մարդկային ուժի գործոնը նվազ կլինի): Այդուհանդերձ, եթե անտեսենք նույնիսկ այս փաստերը, ապա արտահայտված կարծիքը կրկին անհամոզիչ կինչի այն պատճառով, որ անպատասխան կմնա այն հարցը, թե ինչու՞ անցքեր չկան ամենախոշոր ժայռակտորների վրա (օրինակ՝ ձվածիր կառույցի քարերը և ոչ միայն) և հակառակ՝ առկա են փոքր քարերից 2-3 վրա, դրանք գտնվում են շրջանաձև կառույցի տարածքում, ինչը և ենթադրել է տալիս, թե դրանք ժամանակ առ ժամանակ տեղաշարժվել են: Այսպիսով՝ արտահայտված կարծիքը, չբացահայտելով հուշարձանի նշանակությունը, ավելի առեղջվածային է դարձնում այն՝ խառնաշփորություն առաջացնելով և տարբեր կառույցների (դամբարաններ և շարքով կանգնեցված քարեր ու բնակավայր) ժամանակագրության մեջ, առանց որի, ինչպես ժամանակին դեռ շեշտել է պատմահայր Խորենացին, պատմությունը ստույգ լինել չի կարող:

Հուշարձանի թվագրությունն ու շերտագրությունը պարզելու նպատակով պեղումներ կատարեցինք հնավայրի չորս տարբեր հատվածներում՝ բացելով նաև մի քանի դամբարաններ, որոնք, գտնվելով հուշարձանի հարավային հատվածում, նույն կառույցվածքն ունեին ինչ և շրջանի կենտրոնում եղածը: Պեղված դամբարաններից հայտնաբերված նյութերը թվագրված են մ.թ.ա X-VIIIդդ: Ցավոք, մայր հողի մեջ պատրաստված խոշոր քարարկոների կողոպտված լինելու հանգամանքը թույլ չի տալիս նույն վստահությամբ մոտենալ վերջիններիս թվագրությանը: Դատելով դրանց կառուցողական առանձնահատկություններից՝ ենթադրում ենք միայն, որ դրանք կառուցվել են մ.թ.ա. II հազ. II կեսում: Հնարավոր է՝ այս թվագրության հստակեցմանը կօգնեն այլ դամբարանների մաքրման ընթացքում ինչ-որ բեկորներ հայտնաբերելու հնարավարությունը: Ներկա վիճակով կարող ենք նշել միայն, որ հարցը պարզելու նպատակով մուտքով քարարկոնի (մուտքի առկայությունը դամբարաններում եղակի երևույթ չէ) մաքրման ժամանակ, ստորին շերտից հայտնաբերեցինք առանձին, այդ թվում և գունագարդ խեցանոթների բեկորներ: Կապ չունենալով քարարկոնի կառուցման ժամանակի հետ՝ դրանք կարող են դամբարան ընկնել բնակավայրի մշակութային շերտից դամբարանը կառուցելու ժամանակ: Այս ենթադրության օգտին են խոսում բնակավայրի տարբեր հատվածներում կատարված հետախուզական բնույթի պեղումների արդյունքները: Դրանք ցույց տվեցին, որ հուշարձանի մշակութային շերտի հզորությունը ամենուր տարածվում է 0.3-0.5մ միջև: Դա խոսում է բնակավայրի գոյության ոչ շատ մեծ ժամանակաշրջանի մասին: Դատելով ամենուր հայտնաբերված միատեսակ նյութերից (գորշ անփայլ, սև փայլեցրած ու այլ երանգներ, ինչպես և

կարմիր հիմնագույնի վրա սև կամ դարչնասեագույն ներկով ներկով գծազարդեր ու-նեցող խեցանոթների մասեր, աղորիքներ, կոկիչ և այլն), բնակավայրը կարող է հիմ-նադրված լինել մ.թ.ա. III հազ. վերջում- II հազ. սկզբում: Յուշարձանի արևելյան կող-մում կանգնեցված ժայռակտորները այդ ժամանկաշրջանին են պատկանում:

Դարց է առաջանում, թե ի՞նչ իմաստ ուներ կարճ ժամանակ գոյատևած բնակա-վայրի համար այդքան աշխատանք ծախսել, խոշոր ժայռակտորներ բերել, անցքեր բացել դրանց վրա և այլն, ապա լինել այն, որի հետևանքով և ամրացած բնակավայ-րը հարյուրամյակներ հետո դամբարանադաշտի է փոխարկվում: Նման իրավիճակ կարող էր ստեղծվել պատերազմի, այլ բնույթի խոշոր աղետի ժամանակ, եթե բնակ-չությունը անմիջապես լքում է բնակավայրը, կամ եթե հուշարձանը ծիսական նշանա-կություն ունենալով՝ ինչ-որ լուրջ պատճառով կորցնում է այդ նշանակությունը և, մատնվելով անգործության, լքվում են: Այս դեպքում բնական է ենթադրել, որ հուշար-ձանի կառուցման ժամանակ մարդիկ ամենին չեն մտածել հետագայում պատահե-լիք այդ պատճառի մասին: Բոլոր դեպքերում առաջին ենթադրությունը չի հաստատ-վում, քանի որ աղետի հետքեր պեղումների ժամանակ չդիտվեցին: Մնում է երկրոդ ենթադրությունը, որի օգտին են խոսում շրջանաձև ու շարքով կանգնեցված քարերը, անցքերի առկայությունը: Իրոք, անցքերից դիտելու դեպքում, որոնք հիմնականում արևմուտք-արևելք ուղղվածություն ունեն, տեսնում ենք հետաքրքիր և շատ կարևոր օրինաչափություն, բոլորն ունեն երկիր-երկինք կամ երկիր-հորիզոն ուղղվածություն, որի հետևանքով կարելի է տեսնել երկնակամարի կամ հորիզոնի առանձին հատված-ներ: Այս դիտարկումները ենթադրել տվյալն, թե անցքերը բացվել են տարվա տար-բեր ժամանակներում, տարբեր բարձրություններից, որոշակի կետերից երկնային լու-սատուների շարժմանը և դիրքին հետևելու համար¹: Տվյալ դեպքում անհասկանալի է մնում, թե ինչ նպատակով են կանգնեցվել այն քարերը, որոնց վրա անցքեր չեն բացվել. հարցի կապակցությամբ որևէ ենթադրութուն կամ վարկած առաջադրելուց, ձեռնպահ ենք մնում: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում շրջանաձև դասավորված քարերից (դրանցից ոչ մեկի վրա անցք չկա) կազմված կա-ռույցը, որի արևելյան մասում կանգնեցված քարերը «հարցականի» պոչիկն են կազ-մում: Այս դեպքում առանձին կարևորություն է ստանում շրջանի կենտրոնում գտնվող դամբարանի համար ծածկասալ ծառայած կարմիր գույնի քարը, որը սկզբնապես, ա-մենայն հավանականությամբ, կանգնեցված է եղել շրջանի կենտրոնում: Դաշվի առ-նելով այսպիսի բարձրությունը, անցքերի հեռավորությունը հողի մակերեսից, ինչպես և քարի շրջանի մեջ գտնվելու հանգամանքի հավանականությունը՝ համոզվեցինք, որ այդ բարձրությունից դիտելու դեպքում, արևը 21-ին՝ ժամը 7:10 «նստեց» պոչիկը ձ-

¹Տե՛ս Խնկիկյան Օ., Սիսիանի Զորաքարերը, «Հայաստանի բնություն», 1984, N-4, էջ 33-34:

ևավորող երեք քարերից մեջտեղինի վրա և հաշվված վայրկյանների ընթացքում հեռացավ այդ կետից: Դասկանալի է՝ տեղաշարժվելու դեպքում, եթե այլ կետից դիտենք, արևի սկավառակը «կնստեր» քարերից մեկի կամ մյուսի վրա: Այս կապակցությամբ հարկ է ներկայացնել և սիսիանցի սիրողների կողմից բացահայտած մանրամասնը. դեկտեմբերի 21-ին կատարած չափումների ժամանակ, արևի ճառագայթը, անցնելով շրջանի եզրին գտվող քարի անցքով, ընկավ կարմիր կտորի վրա, որը տղաները մինչ այդ դրել էին շրջանի կենտրոնում, ուր և, ամենայն հավանականությամբ, կարմիր քարն է կանգնեցված եղել: Կատարված դիտարկումները կասկած չեն թողնում, որ այս առեղջվածային հուշարձանը աստղագիտական նշանակություն է ունեցել, որտեղ նաև, կարծում ենք հետևել են համաստեղություններին: Ցավոք, մոլորակները դիտելու կամ դրանց վերաբերյալ հաշվարկներ կատարելու կարևոր խնդիրը, ինչպես նշում է ակադ. Պ. Ս. Շերունին, ուսումնասիրված չէ: Այդուհանդերձ, գիտնականը համոզված է, որ մեր հեռավոր նախնիները հետաքրքրվել են նաև մոլորականերով: Ցետազոտողը Զ. Շոկինսի համաձայնությամբ ներկայացնում է և վերջինիս կողմից իրեն ուղղված նամակից բավական ընդարձակ մի հատված, որտեղ ասվում է, թե Սթումհենջը հետազոտող աստղագետը նշում է նաև հուշարձանի, շրջանից գնացող քարուղու՝ լուսնի ծագման ամենահյուսիսային կետին, նրա կուլմինացիայի օրը մ.թ.ա. III հազ. ուղղված լինելու հանգամանքը¹: Տեղին է նշել և Է. Ս. Պարսամյանի և Ա. Յ. Բարսեղյանի դիտարկումների արդյունքները. որոնք ցույց են տալիս, որ անմիջապես շրջանի հարևանությամբ գտնվող մուտքի (այդտեղ քարեր չկան) կենտրոնում նախքան արևածագը Վեներան է երևացել: Ցետազոտողները համոզված են, որ հուշարձանը պատրաստողները կարող էին այն օգտագործել արևին, ինարավոր է և երկնային այլ լուսատուներին հետևելու համար²:

Զորաքարերի՝ աստղագիտական նշանակություն ունենալու հանգամանքը կասկած չի հարուցել և հուշարձան այցելած օտարերկրյա մասնագետների մոտ, որոնք իրենց հերթին որոշակի դիտողություններ են կատարել ու ենթադրություններ առաջադրել, դրանք բարեխղճորեն շարունակված են ակադ. Պ. Շերունու աշխատանքում: Այստեղ նշենք միայն, որ մենք լիովին բաժանում ենք հուշարձանի՝ նաև ծիսական նշանակություն ունենալու միտքը: Զծանրանալով այս ընդարձակ հարցի վրա՝ նշենք միայն, որ մեր բնապաշտ նախնիները ևս, ինչպես և մյուս ժողովուրդները, պաշտել են բնության երևույթներն ու երկնային լուսատուները: Փաստերը բազմաթիվ են, և դրա ուղղակի վկայությունն են նաև Եզնիկ Կողբացու այն խոսքերը, թե «ինչպես պիտի երկրպագվեն ոչ ինքնագո և ոչ մշտնջենական գոյակները, մանավանդ մարմնավոր-

¹Տես Շերունի Պ., նշվ. աշխ., էջ 64, 67:

²Տես Պարսամյան Յ., Եարշեգյան Ա., Զագագկա. Յօրագ Կարա, «Խ. Աբովյանի անվ. պետ. մանկ. ինստիտուտի գիտաշխատանքների թեմատիկ ժողովածու», Երևան, 1987.

Աերն ու տեսանելիները, ինչպես՝ արեգակը, լուսինը, աստղերը, կրակը, ջուրը, հողը, որոնք մոգերի ու հեթանոսների կողմից պաշտվում են »¹:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազգագրական հանդես, Գ գիրք , Թիֆլիս, 1898:
2. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, թարգմ., մեկնաբան, Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970:
3. Խնկիկյան Օ., Սիսիանի Չորաքարերը, «Հայաստանի բնություն», 1984, N-4:
4. Յերումի Պ., Հայերը և հնագույն Հայաստանը. հիմքերը հայոց. արքաեօսաստղագիտություն, լեզվաբանություն, հնագույն պատմություն, Երևան, 2006:
5. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969:

ԱՅԼ ԼԵԶՈՒՆՆԵՐՈՎ

6. Кушнарева К., Древнейшие памятники Двина, Ереван, 1978.
7. Лисициан Ст., Кошун-даш. Мегалитическое городище в Сисиане (Зангезур). Академия Наук СССР XLV Академику Н. Я. Марру. Изд. АН СССР. Москва, Ленинград, 1935.
8. Парсамян Э., Барсегян А., Загадка. Зорац Кара, «Խ. Աբովյանի անվ. պետ. մանկ. ինստիտուտի գիտաշխատանքների թեմատիկ ժողովածու», Երևան, 1987.
9. Парсамян Э., О возможном аброномическом назначении мегалитических колец Ангелокота, Рյուրակа и аստղադիտարանի հաղորդումներ, պրակ LVII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1985.
10. Хокинс Дж., Уайт Дж., Разгадка Тайны Стоунхенджа, Москва, 1984.

¹Տե՛ս Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, թարգմ., մեկնաբան, Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 34:

ԱՍՓՈՓՈՒՄ

Յոդվածում խոսվում է Սիսիանի մոտ գտնվող, անվանումը հնամենի մի ավանդությունից ստացված, «Զորաքարեր» կոչվող միաշերտ հուշարձանի մասին:

Ներկայացվում են նաև մասնագիտական կարծիքները հուշարձանի նշանակության վերաբերյալ. դրանք համահունչ են հեղինակի՝ Զորաքարերի, մ.թ.ա. III հազ. վերջին քառորդում ակադ. Պ. Մ. Յերունին ավելի վաղ թվագրություն է առաջարկում գործած աստղադիտարան հանդիսանալու ենթադրությանը:

РЕЗЮМЕ

В статье говорится о находящемся близ г. Сисиана однослоистого памятника “Зоракарер”, название котоего связано с древним преданием.

Представлены также мнения специалистов о значения памятника: они созвучны с предположением автора, что “Зоракарер” имел астрономическое назначение и датируется последней четвертью III тыс. до н. э. (академик П. М. Геруни предлагает более раннюю датировку).

ՍԻՍԻԱՆԻ ԶՈՐԱՔԱՐԵՐԸ

«Հայաստանի բնություն» 1984, №4
Օմիկ Խնկիլյան

Սիսիանից մոտ 3 կմ հյուսիս-արևմուտք, շուրջ ութ հեկտար զբաղեցնող եռանկյունաձև հարթության վրա տեղադրված է նշանավոր «Զորաքարեր» (Ղոշուն դաշ) կոչվող հուշարձանը: Այն արևմուտքից կտրվում է խոր, դժվարամատչելի կիրճով, որի հատակով հոսում է Դառը գետակը, իսկ արևելքից հարող սարավանդից սահմանազատվածէ տարբեր բարձրության, ուղղահայաց դիրքով, հյուսիսից հարավ ձգվող քարասյունների շարքով(Նկ.1): Յուշարձանի անվանումն առաջացել է այդ քարերից, որոնք, ժողովրդական ավանդության համաձայն, քարացած զինվորներ են: Այս ժայռաբեկորների մի մասի վերին ծայրում, իսկ որոշ դեպքերում և անմիջապես եզրում 6-8 սմ տրամագծով անցքեր են շաղափիված (Նկ. 2): Շարքի կենտրոնական հատվածում այդ քարասյունները տեղադրված են C տարի տեսքով, որի կենտրոնում կառուցված 2 վերգետնյա քարեկղները ծածկված են եղել քարե լիցքից կազմված դամբարանաթմբով:



Նկ. 1



Նկ. 2

Քարաշարերից արևմուտք՝ մինչև կիրճ, եռանկյունաձև տափարակը ծածկված է հատակագծում ուղղանկյուն-քառանկյուն, սեղանաձև կառուցների ավերակներով, որոնց անշաղախ պատերի բարձրությունը որոշ հատվածներում հասնում է 1,8 մետրի: Այս կառուցների միջև, ինչպես և անմիջապես դրանց տարածքում, այս ու այնտեղ, հողի մեջ հանդիպում են խոշոր քարարկղներ, որոնցից մեկը մուտք ունի: Այդ դամբարանների ծածկասալերը, որպես կանոն, հանված են կամ ընկած դամբարանախցերի մեջ: Յուշարձանի հարավային եզրում՝ նման դամբարանների կողքին կան վերգետնյա քարարկղներ, որոնք պահպանվել են նաև հարավ-

կազմված դամբարանաթմբով: Քարաշարերից արևմուտք՝ մինչև կիրճ, եռանկյունաձև տափարակը ծածկված է հատակագծում ուղղանկյուն-քառանկյուն, սեղանաձև կառուցների ավերակներով, որոնց անշաղախ պատերի բարձրությունը որոշ հատվածներում հասնում է 1,8 մետրի: Այս կառուցների միջև, ինչպես և անմիջապես դրանց տարածքում, այս ու այնտեղ, հողի մեջ հանդիպում են խոշոր քարարկղներ, որոնցից մեկը մուտք ունի: Այդ դամբարանների ծածկասալերը, որպես կանոն, հանված են կամ ընկած դամբարանախցերի մեջ: Յուշարձանի հարավային եզրում՝ նման դամբարանների կողքին կան վերգետնյա քարարկղներ, որոնք պահպանվել են նաև հարավ-

արևելյան մասի սահմաններից դուրս: Ընդհանուր գծերով այսպիսին է հուշարձանի տեսքը, որը մինչև օրս չի ենթարկվել մասնագիտական հետազոտության: Սակայն այն վաղուց ի վեր հետաքրքրել է ուսումնասիրողներին, որոնք մասնավորապես, անդրադարձել են ժայռաբեկորների և դրանց վրա բացված անցքերի նշանակությանը: Համաձայն եղած կարծիքի՝ այդ անցքերը նախատեսվել են քարասյունները կենդանիների միջոցով տեղափոխելու համար (Ստ. Լիսիցյան): Ինչ վերաբերում է քարասյուններին, հատկապես կենտրոնական հատվածի C-աձև դասավորվածներին, ապա դրանք ենթադրվել են դոլմենների (դամբարանի տեսակ) մոտ դրված մենիրներ (առանձին կանգնեցված քարասյուններ) ու կրոմլեխներ (դամբարանի շուրջը շրջանաձև տեղադրված քարեր), որոնք, կապված լինելով անդրշիրիմյան կուլտի հետ, յուրատեսակ տաճար են հանդիսացել, ուր կատարվել են զոհաբերություններ (Կ.թ. Զուշնարյուվա):

Այս կարծիքն արտահայտում է և մեկ այլ ենթադրություն. Վերգետնյա քարարկղները և C-աձև կառույցն ու շարքով տեղադրված ժայռաբեկորները համաժամանակյա են: Այդպես է արդյոք: Այս հարցերը պարզելու նպատակով պեղնվեցին տարբեր սենյակների առանձին մասեր և մի քանի վերգետնյա դամբարաններ, որոնք գտնվում էին բնակավայրի ներսում և նրա սահմաններից դուրս: Բնակավայրի երեք հատվածներում կատարված հետախուզական պեղումները տվեցին հետևյալ պատկերը. մշակութային շերտի հզորությունը ամենուր հավասար է, այն տատանվում է 0.3-0.5մ միջև, որը խոսում է բնակավայրի կարճատև գոյության մասին: Բնակավայրը, ելնելով ամենուր հայտնաբերված միատեսակ նյութերի առկայությունից, (գորշ անփայլ, սև փայլեցված, ինչպես և կարմիր հիմնագույնի վրա սև ներկով գծազարդներ ունեցող տարատեսակ խեցանոթների մասեր, աղորիքներ, կոկիչ, վանակատե ծլեպներ և այլն), թվագրվում է մ.թ.ա. 3-րդ հազ. վերջով և 2-րդ հազ սկզբով: Այդ ժամանակաշրջանում են կանգնեցվել և քարասյունները, հետևաբար դրանք դամբարանների հետ առնչություն չունեն: Վերջիններս, ինչպես արդեն երկում է հայտնաբերված նյութերից (բրոնզե դաշույններ, նետասլաքներ, պերճանքի առարկաներ, հիմնականում սև խամրած կամ բաց շականակագույն մակերեսներով տարբեր ձևերի խեցանոթներ և այլն), պատկանում են մ.թ.ա. 1-ին հազ. սկզբին, այսինքն՝ մի ժամանակաշրջան, երբ բնակավայրում կյանքը վաղուց դադարել էր գոյություն ունենալուց:

Իրոք, այն, որ քարասյունները, մենիրներ և կրոմլեխներ չհանդիսանալով, կապ չունեն դամբարանների հետ, փաստարկվում է՝

ա) C-աձև կառույցի ներսում գտնվող դամբարաններից մեկի համար որպես ծածկի սալ օգտագործվել է անցք ունեցող ժայռաբեկորներից մեկը, որը դամբարանը կառուցվելուց հետո ծածկվել է քարե լիցքով:

բ) Եթե դրանք կրոնլեխներ և մեհիրներ լինեին, ապա այդպիսինները կշրջափակեին և մյուս դամբարանները, որը սակայն չի դիտվում:

գ) Շարքով կանգնեցված այդ քարասյուների մոտ՝ հարավային հատվածում, տեղ-տեղ պահպանվել են 2.4մ լայնությամբ պատերի հետքեր, որոնք ցույց են տալիս, որ այդ քարասյուները ցածր պատի արտաքին երեսն են հանդիսացել:

Արված դիտողորյուններն այսպիսով բացառում են քարասյուների կրոնլեխն և մեհիրներ լինելու վարկածը, մանավանդ որ դրանց անմիջապես մոտ դամբարաններ չկան: Տվյալ դեպքում համոզիչ չի հնչում և այն կարծիքը, համաձայն որի անցքերը նախատեսվել են ժայռաբեկորները անասունների միջոցով տեղափոխելու համար: Ի-րոք, եթե ընդունեք այդ վարկածի իրավացիությունը, ապա անմիջապես հարց կառաջանա, թե ինչեու՝ այդ անցքերը բացակայում են բոլոր խոշոր քարասյուների վրա, ինչու՝ դրանք առկա են բավական փոքր քարերի վրա, որոնք հնարավոր է տեղաշարժել երեք-չորս մարդու միջոցով, ինչու՝ անցքերը բացված են քարասյունների եզրում կամ ամենաբարակ մասում, որի հետևանքով քարի մնացած նեղ շերտը անմիջապես կկոտրվեր՝ բոլորովին չշարժելով 4-6 տոննա ծանրություն ունեցող քարասյունը տեղից:Առաջացած հարցերը, այսպիսով, չգտնելով իրենց պատասխանը, բացառում են տեխնիկական կողմը՝ խոսելով այդ անցքերի այլ նշանակության մասին: Հարց է առաջանում՝ ի՞նչ նշանակություն են ունեցել ուրեմն այդ քարասյունները, ի՞նչն է ստիպել մարդկանց ծախսել այդքան ծանր և երկարատև աշխատանք պարզ գործիքներով նման անցքեր բացելու համար:Նախքան առաջադրուված հարցերին պատասխանելը, տեսնեք՝ քանի՝ քարի վրա են անցքեր փորված, ի՞նչ բարձրության վրա են դրանք գտնվում հողի մակերևույթից և ի՞նչ ուղղություն ունեն:Հարցին մոտենալով այդ տեսանկյունից՝ ստանում ենք բավական հետաքրքիր տվյալներ:Նախ անմիջապես նշենք, որ C-աձև կանգնեցված 29 խոշոր(երկուսը պառկեցված են, ընդամենը՝ 31) քարասյուններից և ոչ մեկի վրա (բարձրությունները՝ 2-2.5մ) անցք չի բացված: Անցքեր կան հյուսիս-հարավ, մոտ 280մ երկարությամբ ձգվող քարերի վրա(քարաշարքից միայն 57-ին վրա), դրանց հեռավորությունները տատանվում են 1-24մ միջև, որոնցից 29-ը տեղադրված են C-աձև կառույցի հյուսիսային եզրից հյուսիս, իսկ 28-ը՝ դրանից հարավ ընկած տարածքում:

Անցքերի բարձրությունը գետնի մակերևույթից տատանվում է 15 սմ-ից (հետևաբար և չին կարող թշնամուն հետևելու համար դիտակետ ծառայել) մինչև 2.1մ: Այդ քարասյունները չեն կատարել և պարիսափի դեր, չնայած ինչպես նշվեց վերևում, առանձին հատվածներում դրանք պատիարտաքին երեսն են հանդիսացել: Այդ պատը, սակայն, բարձր չի եղել, քանի որ այդ դեպքում պատի ներքինքարաշարքը, ծածկելովանցքերը, կիմաստագրկեր դրանց նշանակությունը:Այս պատի՝ պարիսափ լինելը բա-

ցառվում է և նրանով, որ C -աձև կանգնեցված քարերի միջև պատերի հետքեր ընդհանրապես չկան, իսկ բարձր պարիսպի երկու կողմերում կիսաշրջանաձև այդպիսի ժայռաբեկորներ կանգնեցնելը, առանց որևէ նշանակության, անիմաստ կլիներ: Ինչ վերաբերում է անցքերի ուղղվածությանը, ապա դրանք իմնականում կողմնորոշված են արևելք-արևմուտք, հյուսիս-հարավ: Յետաքրքիր է, որ անցքերից դիտելու դեպքում տեսնում ենք հորիզոնի և երկրակամարի առանձին հատվածներ: Արդյո՞ք այդ հանգամանքը չի խոսում այս առեղջվածային կառուցի՝ յուրատեսակ աստղադիտարան լինելու մասին(այս դեպքում մութ է մնում, թե ի՞նչ նպատակով են կանգնեցվել այն քարերը, որոնց վրա անցքեր չեն բացել և ինչու՞ այդ կարգի այլ հուշարձաններ հայտնի չեն): Իրոք, ստացվում է այնպիսի տպավորություն, որ այդ անցքերը նախատեսվել են տարբեր ժամանակներում, տարբեր բարձրություններից, որոշակի կետերից երկնային լուսատուների շարժմանը և դիրքին հետևելու համար: Նման ենթադրությունը, որը դեռևս վարկածային բնույթ կրելով, մասնագիտական լուրջ հետազոտման կարիք է զգում, հավանական է թվում, եթե հաշվի ենք առնում, որ անցքերը բացված են 57 քարերի վրա:Այդ թիվը գրեթե ճշտորեն համընկնում է 2 լուսնային ամիսների օրերի քանակին(մեկ լուսնային ամսվա տևողությունը հավասար է 29 օր 12 ժ. 44 րոպ. 3 վրկ.): Տեղին է նշել, որ Գեղամա և Վարդենիսի լեռներում հայտնաբերված ժայռապատկերների վրա կան լուսինն արտահայտող պատկերներ ու նրանց շուրջն արված կետեր, որոնց քանակը համընկնում լուսնային ամսվա տևողության հետ, իսկ Մեծամորի փոքր բլուրն ունեցել է պաշտամունքային-աստղագիտական նշանակություն (տարբեր դեպքերում առկա են որոշակի առանձնահատկություններ կապված ավելի նեղ նշանակության հետ և, հետևաբար, վերը նշված մութ հարցերը հնարավոր են, որ դրանով պայմանավորված լինեն):Վերջինիս կապակցությամբ Զ.Ս. Յոուկինսը ակադեմիկոս Վ.Յ. Յամբարձումյանին ուղղված նամակում գրում է. «Ես համոզված եմ, որ Ստորև նշված միակ չէ և պետք է սպասել այդպիսի աստղագիտական մշակույթ Հայաստանում»:

ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀՍԱԳՈՒՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Պարիս Հերունի
«ԳԱԱ ակադեմիկոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր

«Եթե ինձ հարցնեհն, թե մեր մոլորակի վրա որտեղ կարելի է ամենից շատ
հրաշքներ տեսնել, ես կասեի Հայաստանում:
...Ես սիրեցի ձեր երկիրը, նրա տաղանդաշատ մարդկանց: Եվ հեռանալով՝ ես
այստեղ թողնում եմ իմ սիրտը»:
Ռոքուել Քենտ

Քարահունջ: Նախապատմական հրաշք Հայաստանում

Սիսիան քաղաքի մոտակայքում՝ Երևանից 200 կմ հեռավորության վրա, կա նախապատմական մի հսկա հուշարձան, որը բաղկացած է հարյուրավոր կանգնած մեծ քարերից (նկ.1): Այդ քարերից շատերը իրենց վերին մասում ունեն կլոր անցքեր (նկ.2):

Դնագիտական պեղումները կատարվել են միայն հուշարձանի մոտակայքում (շուրջը), որտեղ հայտնաբերվել են հնագույն դամբարաններ ու բնակավայր, որոնք թվարկվել են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակով (2-5): Բայց ինքը, քարե հուշարձանը չի ուսումնասիրվել: Այդ քարերի բովանդակության մասին միայն ենթադրութուններ են արվել, որոնք կապված են եղել նրանց սույն կրոնական (2), հոգևոր (3) կամ այլ նշանակության հետ: Սիսիանի բնակիչ-



Նկ 1



Նկ 2

ները հուշարձանն անվանում են «կանգնած քարեր» կամ «ցից (տնկված) քարեր» ու պատմում են, որ դրանք, ըստ ամենայնի, կառուցվել են կրոնական կամ պաշտպա-

նության նպատակով, և ինչպես անցյալում, նարդիկ այդ անցքերի միջից աստղեր են դիտել¹:

Առաջին հետազոտությունը

1999-2001թթ-ին Արևադարձի և Գիշերահավասարի օրերին Յերունին գիտարշավանք ձեռնարկեց 8 հոգով 4-ական օրով յուրաքանչյուր անգամ: Կազմել է հուշարձանի մանրամասն տոպոգրաֆի քարտեզը, չափել է նրա աշխարհագրական լայնությունն ու երկայնությունը, տեղի մասնագիտական շեղման անկյունը, ինչպես և կատարվել են հորիզոնին մոտ գտնվող լեռնաշղթաների անկյունային բարձրությունների չափերը 360° ազիմուտների համար: Մանրամասնորեն չափվել են քարերում եղած բոլոր անցքերի ուղղվածության ազիմուտները և տեղի անկյունները և այլ կարևոր բնութագրեր: Կազմվել է 223 քարերի լիակատար կատալոգ՝ նրանց չափերի ու վիճակի նկարագրությամբ, և բոլոր այդ քարերն համարակալվել են: Կատարվել են երկնային աղբյուրների բազմաթիվ դիտումներ, Արևի և Լուսնի ծագելու, մայր մտնելու և կուլմինացիայի պահերի նկարներ, նկարահանվել են տեսաֆիլմեր:

Հայտնաբերվել են բազմաթիվ նախնադարյան աստղագիտական քարե գործիքներ և որոշվել նրանց ճշգրտությունը: Յերունին, օգտագործելով երկրագնդի առանցքի պրեցեսիայի երևոյթի օրինաչփությունները և աստղագիտական այլ օենքներ, որոշեց աստղադիտարանի տարիքը: Ըստ Յերունու՝ Քարահունջի հուշարձանը ունեցել է 3 հիմնական գործառություն:

ա) Յին Հայաստանի գլխավոր Աստված Ար-ի (Արև) և նրա «քարտուղար»՝ գիտության, գրի և արվեստի հովանավոր Տիր աստծո տաճար:

բ) Մեծ և զարգացած աստղադիտարան:

գ) Համալսարան¹:

Յերունու կարծիքով, Քարահունջի աստղադիտարանը եղել է շատ զարգացած և ակտիվ գործել է ավելի քան 7500 տարի առաջ (մ.թ.ա 6-րդ հազարամյակ): Այն անընդհատ գործել է ավելի քան 5500 տարիների ընթացքում (մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբը): Այնպես որ Քարահունջը աշխարհի ամենահին աստղադիտարանն է:

¹Տես Յերունի Պ., Հայերը և հնագույն Հայաստանը. իիմքերը հայոց. արքաեօաստղագիտություն, լեզվաբանություն, հնագույն պատմություն, Երևան, 2006, էջ 8:

¹Յերունի Պ., նշվ. աշխ., էջ 17-18:

Հուշարձանի տեղը և անվանումը

Քարահունջի տեղի լայնությունը $39^{\circ}34'$ է, իսկ երկայությունը՝ $46^{\circ}01'$: Նա գտնվում է ծովի մակերևույթից 1770մ. բարձրություն ունեցող սարահարթում և զբաղեցնում է մոտ 7 հեկտար տարածք՝ Որոտան գետի Դառ վտակի ձորի ձախ ափին: Այստեղ հուշարձանից 5 կմ և Շաքի գյուղից 4 կմ հեռավորության վրա ստորգետնյա մի գետ է բխում ու 30 մ բարձրությունից թափվում է ցած (Շաքի ջրվեժը՝ դառնալով Որոտան գետի վտակը):

Ողջ Հայաստանում (ներառյալ պատմական Հայաստանում) կան շատ հնագույն մեգալիթիկ կառույցներ, մենիկրներ, քարե աստղադիտարաններ, իին համալսարաններ և այլն: Հատկապես Քարահունջ հուշարձանի շրջանում կան հնագույն շատ մեգալիթներ, դամբարաններ ու համալսարաններ, ինչպիսիք են՝ վաղ միջնադարի հռչակավոր Տաթևի, Գլաձորի, Շուշիի համալսարանները և այլն:

Պատմաբան Ստ. Օրբելյանը (13-14դդ.) իր «Սյունիքի պատմություն» գրքում (1-12 դդ.) հիշատակում է Քարունջ գյուղը, որը գտնվել է հայկական Թեղլուկի (Եվլախ) շրջանում՝ Սյունիք կամ Սիսական (այժմ Սիսիան) քաղաքի մոտ¹: Այդ անվանումը հայերեն նշանակում է «Քարե գանձ» կամ «հիմնաքար»:

«Հունջ»-ը հայերեն նույն «հունչ»-ն է ձայն, (կոչ), արձագանք, հնչյուն: Այսպիսով՝ Քարահունջ նշանակում է «Խոսող քարեր»: Ելնելով վերն հիշատակված տվյալներից՝ ես անվանեցի հուշարձանը «Քարահունջ», այսինքն «Խոսող քարեր»: Հետաքրքիր նմանություն կա Քարահունջ և Սթոռիենջ բառերի միջև: «Սթոռին» անգլերեն նշանակում է «քար», իսկ ինչ է նշանակում «հենջ»-ը հայտնի չէ, անգլերենում «հենջ» բառ չկա: Այնպես որ Սթոռինիենջ-ը նույն «Խոսող քարեր»-ն են, և իին ժամանակներում, հնարավոր է, այն կոչվել է Քարահունջ²:

¹Տես Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ժմթ. Ա. Արրահամյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 395:

²Տես Հերունի Պ., նշվ. աշխ., էջ 19:


Քարահունջի քարերը

Քարահունջ հուշարձանը բաղ-
կացած է հետևյալ մասերից՝ կենտո-
նական շրջան, հյուսիսային թև, հա-
րավային թև, հյուսիս-արևելյան քա-
րուղի, լարագիծ, (որը հատում է
շրջանը) և առանձին կանգնած քա-
րեր (նկ. 3):

Քարերի բարձրությունը (գետ-նից) տատանվում է 0,5-ից մինչև 3մ, իսկ կշիռը մինչև 10 տոննա: Քարերը բազալտից են (անդեզիտ), ժամանակի ընթացքում էրոզիայի են ենթարկվել և ծածկված են մամուռներով: Կան նաև շատ կոտրատված ու չհամարակալված քարեր: Քարերը հատվել բերվել են մոտակա Դառ գետի ձորի քարահանքից, բարձրացվել ու տեղափոխվել են հյուսված պարաներով լծկան կենդանիների (եղներ, ձիեր) միջոցով: Դետագայուն, արդեն աստղադիտարանում, բացվել են քարերի անցքերը ու պատրաստվել են աստղագիտական գործիքներ:

Հատուկ անցքեր ունեցող քարահունջի քարեղը եզակի երևույթ են հնագույն հուշարձաններով:

Այդ հսկա քարերի մեջ արված անցքերը, ապահովում են դեպի նպատակետը ուղղվածության բարձր ճշտությունը: Անցքերի մեջ մասը ուղղված են իրական հորիզոնի տարրեր կետերին, որոշ անցքեր վեր՝ դեպի երկինք:



Նկ.3 Քարահունչ հուշարձանի քարտեզը ըստ Պ. Յեռնիլու:

Կենտրոնական շրջան

Կենտրոնական շրջանը կազմված է 40 քարերից, ունի ձվաձև տեսք և սուր ծայրով ուղղված է դեպի արևմուտք: Շրջանի մոտավորապես կենտրոնում գտնվում է ավերակների մի կույտ ($7 \times 5\text{մ}^2$ չափերով), ուր շատ հնում, հավանաբար, եղել է ինչ-որ կենտրոնական տաճար:

Հյուսիսային թև


Այն ձգվում է կենտրոնական շրջանից դեպի հյուսիս ու բաղկացած է 80 (համարակալված) քարերից, որոնցից 49-ը անցքեր ունեն: Թևի երկարությունը 136մ է, նրա հյուսիսային վերջավորությունը արևմտյան և արևելյան քարուղիներ ունի, յուրաքանչյուրը 50մ երկարությամբ:

Հարավային թև

Այն ձգվում է կենտրոնական շրջանից 75մ դեպի հարավ, հետո թեքվում է մոտավարապես դեպի արևմուտք, արևմուտք-հարավ ու շարունակվում է ևս ավելի քան 40մ:

Հյուսիս-արևելյան քարուղի

Այն ունի 36մ երկարություն, 8մ լայնություն և ուղղված է մոտավորապես Արևի ծագման կետին ամառային Արևադարձի օրը: Արևադարձը պարունակում է 8 քար, որոնցից 2-ը ունեն անցքեր (Նկ.4):



Նկ. 4

Լարագիծ

Լարը հատում է կենտրոնական շրջանը ու որպես հյուսիսային թևի շարունակություն, միացնում է այն հարավային թևի հետ: Լարը ընդգրկում է 20 համեմատաբար փոքր քարեր, որոնցից 6-ը անցքեր ունեն¹:

Անցքեր ունեցող առանձին քարեր


Գիտարշավմերի ընթացքում հետազոտվել են առանձին կանգնած քարե աստղագիտական բազմաթիվ գործիքներ: Դրանք օգտագործվել են Արևը, Լուսինը, մոլորակները և աստղերը դիտելու համար:

Արևը դիտելու համար 17 «Արևի քարեր» կան, իսկ Լուսինը դիտելու համար 14 «Լուսնի քարեր» կան²:

Հնագույն Օրացույց

Հայաստանում արևի օրացույցն օգտագործվել է բոլոր ժամանակներում:

Նախնադարյան աստղագետները, դիտելով առանձին կանգնած «Արևի քարերից» որևէ մեկի անցքից (կան օգտագործելով այլ հնագույն պարզ գործիքներ), կարողացել են ցանկացած օրը ֆիքսել Արևածագի (կամ Արևամուտի) ազիմուտի կետը (դիրքը հորիզոնի վրա) և որոշել նույնիսկ առանց խողովակի, որ այդ կետը Գիշերահավասարին մոտ օրերին օրեօր շարժվում է հորիզոնի գծով 30 աղեղնային րոպե արժեքով, ինչը հավասար է Արևի անկյունային տրամագծին (321), ու վերադառնում է միևնույն դիրքին 365 օր հետո, ինչն անում է մեկ տարի: Ակնհայտ է, որ այսքան պարզ դիտում կարող էր կատարվել շատ ավելի ա-



Նկ. 5 Արևի ձառագայթ № 63
քարի անցքում տեղադրված հայելուց:

¹Տե՛ս նշվ. աշխ., էջ 22:

²Տե՛ս նշվ. աշխ., էջ 30:

ռաջ, քան Քարահունջն է կառուցվել, երբ օրացույցի անհրաժեշտությունը ծագել էր գյուղատնտեսական և այլ աշխատանքներ կատարելու պահանջներից ելնելով: Մոտավորապես 23 հազար տարի առաջ է, երբ հայոց հնագույն օրացույցը (ՀՅՕ) հաստատվեց, ըստ որի, տարվա սկիզբը Գիշերահավասարային՝ Արեգի 1-ին (այժմ՝ մարտի 21-ին) էր: Այսպես, Քարահունջում հայտնաբերվել ու մշակվել է «անշարժ» (ֆիքսված) օրացույց, ըստ որի տարին սկսվում էր գարնանային Գիշերահավասարի՝ Արեգի 1-ի առավոտյան ժամը 6-ին (կամ էլ կեսօրին): Այսպես Քարահունջում հիմնվել է առաջին «անշարժ» Հայկական Օրացույցը և 1461 տարի ժամանակահատվածը կոչվել է «Հայկական շրջան»: Քարահունջի աստղադիտարանում գոյություն են ունեցել նաև արևի ժամացույցներ ու օրացույցներ, բայց դրանք չեն պահպանվել: Միայն կարելի է ենթադրել, որ Քարահունջի թիվ 63 քարը, որի անցքը մեջքին է, օգտագործվել է որպես արևի ժամացույց (Նկ. 5):

Արևի ժամացույցներից բացի գոյություն են ունեցել նաև արևի օրացույցներ, որոնք իրենց ձողերի ստվերի երկարության սանդղակի վրա ցույց էին տալիս տարվա ամիսը: Հին հայկական արևի այդ օրացույցները կոչվել էին «ստվերաչափ»¹:

Համալսարան

Քարհունջի նման մեծ աստղադիտարանը բարձր մասնագիտացում ունեցող բազմաթիվ մասնագետների կարիք ուներ, հատկապես հարյուրավոր դիտորդների, մաթեմատիկոսների և ծառայող անձնակազմի: Այն որ Քարահունջը եղել է նաև համալսարանական կենտրոն, հաստատում են իրար մոտ մոտիկ կանգնած թիվ 160 քարը, որի բարձրությունը 1.9 մ է, և թիվ 161-ը, որի բարձրությունը 1 մ է, սրանք նախատեսված էին ուսուցչի և աշակերտի համար: Երկուսի անցքերն էլ նայում են միևնույն կետին՝ մոտակա բլրի գագաթին ժամանակին գտնվող դիտակետ ծառայող մի որոշակի քարի: Քարահունջում դասավանդվել են Արեգակի, Լուսնի, աստղերի դիտման մեթոդները, ներառյալ խողովակով դիտումների արդյունքների գրանցումը ու դրանց ֆիքսումը, դրանց ճշտությունը որոշելը, աստղագիտություն, մաթեմատիկա և այլն: Ուսուցանել են նաև տիեզերագիտություն, ժամանակագրություն: Աստղադիտարանն իր այժմյան տեսքով մեզ վկայանում է այբուբենի, գրավոր խոսքի առկայության մասին, թվերի, մաթեմաթիկայի, փիլիսոփայության և այլն, ինչպես նաև կայուն պետականության և կարգ ու կանոնի գոյության մասին շատ հազարամյակների ընթացքում: Այնպես որ, Քարահունջը և հայոց լեզուն հաստատում են, որ հայկական քաղաքակրթությունն ի բնե գալիս է շատ ու շատ հին ժամանակներից, մոտ 40000-ամյա

¹Տե՛ս նշվ. աշխ., էջ 31-32:

խորքից: Հայկական աստղագիտությունը՝ մոտ 25000-ամյա պատմություն ունի, որովհետև գերոյի մակարդակից դեպի վեր զարգանալը շատ ավելի ժամանակ էր պահանջում, քան պատրաստի գիտելիքներ ստանալը այլազգի ուսուցիչներից:

Ըստ Հերունու՝ այդպիսի քարաշեն հուշարձաններ կան նաև Իռլանդիայում (Նյու-Գրենջ), Շոտլանդիայում (Քալենիշ), Եգիպտոսում (Քարենիշ), Ֆրանսիայում (Քարնակ) և այլն: Եվ այդ հուշարձանները ոչ միայն լեզվական նմանություն ունեն իրենց անուներով, այլև բազմաթիվ ուրիշ նմանություններ: Աստղադիտարանին կից գործել է Ար աստծո տաճարը, ուր չկար Ասորեստան, որը ուշ շրջանի երևոյթ է: Ար աստծո անունը պահպանվել է հայկական շատ բառերում՝ Արարատ, Արագած, արեստ, արդար, արև, արյուն և այլն¹:

Այսպիսով՝ նման համալիրի (աստղադիտարան, Ար աստծո տաճար, ուսումնական հաստատություն) առկայությունը, վկայում է, որ հայկական լեռնաշխարհում քաղաքակրթությունը զարգացել է շատ վաղուց:

Հողվածը պատրաստեց

Սյունիքի հայագիտական հետազոտությունների կետրոնի
գիտաշխատող՝ Քրիստինա Աղամյանը, <<ԳԱԱ ակադեմիկոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր-արոքեսոր Պարիս Հերունու
«Հայերը և հնագույն Հայաստանը. հիմքերը հայոց արքաներական պատմություն, լեզվաբանություն, հնագույն պատմություն» աշխատության հիմա վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հերունի Պ., Հայերը և հնագույն Հայաստանը. հիմքերը հայոց. արքաներական պատմություն, լեզվաբանություն, հնագույն պատմություն, Երևան, 2006:
2. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծնթ. Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:

¹Տե՛ս նշվ. աշխ., էջ 72:

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված է Պարիս Շերունու կատարած ուսումնասիրությունները Քարահունջի մեգալիթյան հուշարձանում:

Շերունին (2006. 17-19, 87-92) իր հետազոտությունների արդյունքներն ամփոփելով, եկել է այն եզրահանգման, որ Քարահունջը.

- աշխարհի ամենահին ու ամենամեծ աստղադիտարանն է.
- հիմնադրվել է մոտ 15.000 տարի առաջ (իսկ աստղագիտությունը Հայաստանում սկիզբ է առել մոտ 25.000 տարի առաջ).
- ակտիվ գործել է ավելի քան 7.500 տարի առաջ (մ.թ.ա. 6-րդ հազարամյակ).
- շարունակաբար գործել է ավելի քան 5500 տարիների ընթացքում, ըստ Երևանի, մինչև մ.թ. 301 թիվը, երբ քրիստոնեությունը Մեծ Հայքում ընդունվեց որպես պետական կրոն.
- եղել է հին Հայաստանի գլխավոր աստված Ար-ի (Արև) և նրա քարտուղար գիտության, գորի և արվեստի հովանավոր Տիր աստծո տաճար ու նույնիսկ համալսարան:

Նա եզրակացնում է, որ

- Հայաստանի քաղաքակրթությունը ամենահինն է աշխարհում.
- հայոց լեզուն ու քաղաքակրթությունը սկիզբ են առել Հայաստանում մոտավորապես 40.000 տարի առաջ.
- հայերը քաղաքակրթել են այլ ցեղերին ու ազգերին ու անշահախնդրորեն գիտելիքներ են շնորհել, ինչպես իրենց գլխավոր Աստված Արը շնորհում է կյանքը.
- նախնական այբուբենի կազմավորումը կատարվել է 15-10.000 տարի առաջ.
- Քարահունջի ժամանակներում հայ գիտնականները գիտեին, որ Երկիրը գնդաձն է ու նրա շառավիղը մոտավորապես 6.300 կմ է, Երկրի առանցքը Էկլիպտիկայի մակերեսի նկատմամբ ուղղահայացից թեքված է մոտ 24° և այլն:

РЕЗЮМЕ

В статье представлены результаты исследования Парис Геруни памятников эпохи меголита в Караундже. Геруни подводя итоги своего исследования, пришел к тому, что Караундж-

- одна из крупнейших и древних обсерваторий в мире
- создан около 15.000 лет тому назад /а астрология в Армении зародилась около 25.000 лет тому назад /
- активно действовал более, чем 7.500 лет назад /6 тысячелетие до нашей эры /

• действовал более, чем в течени 5500 лет, по–видимому, до 301 года до нашей эры, когда христианство в Армении было принято как государственная религи.

• был главыныи Бог Древней Армении /Ар/ Солнце и его секретарь в науке, рукописи, искуссты бог Тира, покровитель письменности и искусства.

Геруни заявляет, что

• цивилизация Армении самая древняя в мире

• армянский язык и цивилизация берут начало в Армении приблизительно 40.000 лет том уназад

• армяне цивилизовали другим племенам инародам.

• первый алфавит был составлена 15-10.000 лет назад.

Во времена Караунджа армянские ученые знали, что Земля круглая, а ее радиус приблизительно равен 6.300 км, Земная ось относительно поверхности эклиптик и от прпендикулярности уклонилась приблизительно на 24° ит.д.

ԱՆՁԿԱՅՔ-ՔԱՐԱՀՈՒՆԶ

Միեր Քումունց
ԳՊՀ Հայոց լեզվի և գրականության
ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ

Քարահունչ անվանք բնակավայր Ստ. Օրբելյանի կողմից չի նշվում: Դոշուն Դաշն-Զորաց քարեր-Քարահունչ վայրը երբև բնակավայր չի հիշատակվում և կապ չունի Գորիսի Քարահունչի հետ: Արհեստական անվանումը կապ Անձկայքի ու գյուղանուն Քարահունչի հետ, և նրան վերագրովող պատմական արժեքը նույնական հիշատակված չէ Սյունիքի պատմական հուշագրություններում: Մենք փորձ ենք կատարել ստուգանանելու Անձկայք-Քարահունչ անվանումը՝ դրանով ցանկանալով պարզել նաև Զորաց քարեր-Քարահունչ տեղանվան համապատասխանությունը, այսինքն՝ քարականգ հուշարձաններին տրված անվանումը որքանով կարող է համընկնել մեր ստուգաբանությանը, որ կատարվում է Անձկայք-Քարահունչ անվանումների շուրջ:

Քարահունջը Գորիսի նշանավոր գյուղերից է, սակայն, որքան էլ զարմանալի է, Ստ. Օրբելյանը Հաբանդ գավառի մեջ չի նշում **Քարահունչ** անունով բնակավայրը: Պատմիչի կողմից **Քարունջ-Քարահունջը** հիշատակվում է Այլախ գավառում և դա, բնականաբար, այսօրվա Գորիսի **Քարահունջը** լինել չէր կարող: Կան ենթադրություններ, որ Գորիսի **Քարահունջ** գյուղանունը վերանվանություն է, և դա արել են կամ Այլախի **Քարունջ-Քարահունջից** այստեղ տեղափոխված վերաբնակիչները¹, կամ էլ, ինչպես պնդում է գյուղի վերակենդանացման ավանդագրույցը, բնակավայրը ոտքի է կանգնել և վերանվանակոչվել է Շահ-Աբասի բռնագաղթից խույս տված երեք նախիջևանցի եղբայրների կողմից, որոնք բերել էին նաև թթենու տունկեր²: Նախիջևանում եղել է **Քարունջ-Քարահունջ** անունով խոշոր բնակավայր (գյուղաքաղաք):

Գորիսի տարածքում **Քարահունջ** գյուղի հիշատակումը հանդիպում է 17-18-րդ - դարերից սկսած³: Իսկ հետագայում ինչպես է անվանվել **Քարահունջ** գյուղը...

Ներկայիս՝ թեքության վրա գտնվող **Քարահունջի** վերին թաղի աղբյուրը և շրջակայքը կոչվում է **Անձկ**: Այստեղից դեպի սարահարթ կարելի է բարձրանալ քարաժայռերի միջով անցնող ուղիով: Ամենայն հավանականությամբ այստեղ է եղել Ստ. Օր-

¹Ակադ. Պ. Հերունին, Սիսիանի Զորաց քարեր հնավայրը ուսումնասիրելով և այն դիտելով, որպես հնագույն աստղադիտարան, առաջարկում է այն կոչել **Քարահունջ** (տես Սյունիք, լրագիր, 1996, թիվ 4, նաև՝ Ազգ լրագիր, 2003թ., 16 ապրիլ): Հնավայրի տարածքը, ընկնում էր Այլախ գավառի մեջ:

²Տես Հովհաննես կարողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, աշխատասիրությամբ՝ Գ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 334-335:

³Ժամանակագրություն, Ստովիանոսի Օրպելեանի, Երևան, 1942, հավելված, էջ 12: Աբրահամ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973, էջ 151:

բելանի կողմից Յարանդ գավառի հարկացուցակում հիշատակված և 12 միավոր հարկ վճարող միջին մեծությամբ Անձկայք բնակավայրը: Գյուղը ժամանակին դատարկվել է, հետո վերաբնակեցվել, և իին գյուղանունը մնացել է միայն բնակավայրի մի թաղամասում: Անձկայք գյուղանունը կարող էր ծագել բնիկ հայերեն անձուկ՝ «կիրճ», «նեղ անցք» բառից¹: Քարահունջ գյուղից մի փոքր հարավ՝ Վարարակն գետի աջակողմյան լեռնալանջին, կա իին գյուղատեղ, որը և կարող է լինել պատմիչի հիշատակած ավելի փոքր, 6 միավոր հարկ վճարող երկրորդ Անձկայք գյուղը: Գալով այսօրվա Քարահունջ բառի ստուգաբանությամբ՝ նկատում ենք, որ այն Անձկ գյուղի վերին թաղամասի անունից է և ծագում է Քար+ունջ արմատներից: Բարիմաստը բարբառային դրսերումն ունի և ամենևին էլ մի այլ տեղանվան փոխանցումը չէ. *kar-¹ + ունջ² «տակ», «խորք», «հատակ»:^{*} Քարահունջ բառի ժողովրդական արտահայտության ամենատարածված «Քրունջ», ապա ա հոդակապի առաջացման և բառարմատի ու-ի ազդեցությամբ հ աճականի գոյությամբ՝ Քրահունջ ձևերն են: Բարդության նմանությամբ Ղարաբաղի և Գորիսի բարբառներում տարածված ձևեր են քարին տակ, քրատակ – «քարատակ՝ ժայռի մեջ փորված անձավ» կամ «հիմնահատակ եղած»³ բառերը: Ունջ արմատի համար ՆՀԲ նշում է թուրք. սc «ծայր», որ, անշուշտ, չի ընտրվում հայերենի այս և նման բարդությունների համար: Թերևս հավանական կարելի է համարել Գորիսի և Ղարաբաղի բարբառներում տարածված *օնջ* «մուր», «երկարի ժանգ», «սարդոստայն», այստեղից՝ *օնջուտ–ունջուտ* («ունջով պատած», «ժանգուտած») բառը, քանի որ այդ տարածքի ժայռեղեն հյուսվածքը ժանգագույն է, ասել է թե՝ քարաժանգ, որ կարող էր գյուղանունից անկախ–անջատ գոյություն ունեցած լինի տարածքի համար, որն էլ հետագայում վերականգնվել է: Այն ոչ մի կապ չունի Սիսիանում գտնվող Զորաց քարերի հետ, որ սխալմամբ տվել են «Քարահունջ» անվանումը, քանի որ թե՛ Օրբելյանի և թե՛ հետագա մյուս աշխատություններում այդ բառով բնակատեղի կամ ընդհանրապես պատմական վայր չի հիշատակվում, առավել ևս՝ աստղադիտարան: Ավելին, ինչպես նկատում ենք, Քարահունջ բառի ստուգաբանությունը ենթադրում է, որ կապ չկա գյուղատեղին բնորոշող Քարահունջի և Զորաց քարերի հետ:

¹ Աճառյան Յր., Յայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, էջ 204:

¹ Տե՛ս Զահուկյան Գ., Յայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 130

² Տե՛ս Աճառյան Յր., Յայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 604:

* Այս կարծիքին է նաև Ն. Վարդապետյանը, իսկ մյուսները՝ քարի հունչ, քար քունջ և այլն քիչ հավանական են և հավակնելի գիտական մոտեցման համար:

³ Մարգարյան Ալ., Գորիսի բարբառ, Երևանի համալսարանի հրատ., 1975, էջ 498:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973:
2. Աճառյան Յր., Յայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971:
3. Աճառյան Յր., Յայերեն արմատական բառարան հ. III, Երևան, 1977:
4. Ժամանակագրություն, Ստովանոսի Օրպէլեանի, Երևան, 1942, հավելված:
5. Յովիաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Յայոց պատմություն, աշխատասիրությամբ՝ Գ. Թոսունյանի, Երևան, 1996:
6. Մարգարյան Ալ., Գորիսի բարբառը, Երևանի համալսարանի հրատ., 1975:
7. Զահուկյան Գ., Յայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:

ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ

ԹԵՐԹԵՐ

8. Ազգ լրագիր, 2003, 16 ապրիլ:
9. Սյունիք լրագիր, 1996, թիվ 4:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուշուն Դաշն-Զորաց քարեր-քարահունց վայրը երբև բնակավայր չի հիշատակվում և կապ չունի Գորիսի Քարահունցի հետ: Քարահունց գյուղի տեղում է եղել Ստ. Օրբելյանի կողմից Յաբանդ գավառի հարկացուցակում հիշատակված մեծությամբ Անձկայք բնակավայրը: Բարիմաստը բարբառային դրսնորում ունի և ամենաին էլ մի այլ տեղանվան փոխանցումը չէ. *kar-¹ + ունց² «տակ», «խորք», «հատակ»: Քարահունց բառի ժողովրդական արտահայտության ամենատարածված ձևը «Քրունց»-ն է, որ ոչ մի կապ չունի Սիսիանում գտնվող Զորաց քարերի հետ, քանի որ թե՛ Օրբելյանի և թե՛ հետագա մյուս աշխատություններում այդ բառով բնակատեղի կամ ընդհանրապես պատմական վայր չի հիշատակվում, առավել ևս՝ աստղադիտարան:

¹Տե՛ս Զահուկյան Գ., Յայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 130:

²Տե՛ս Աճառյան Յր., Յայերեն արմատական բառարան, հ. III, էջ 604:

РЕЗЮМЕ

Местечко Кошун дашн-Зорац карер-Караундж, как населенный пункт не упоминается и не имеет никакой связи с горисским Караунджем. На месте села Караундж был населенный пункт Анзкайк упоминаемый Ст. Орбеляном в списке налогоплательщиков провинции Абанд этимология слова имеет диалектное происхождение и вовсе не является переносом названия другого названия: кар+ундж, “под”, “глубина”, “дно”. Самый распространенный вид народного произношения слова Караундж “Крундж”, что не имеет ничего общего с находящимися в Сисиане Зорац карерами, так как ни Орбеляном ни авторами других трудов не упоминается населенный пункт или вообще какое-либо историческом месте с этим названием, там более обсерватория.

ԱՆԳՈՒ ՔԱՐԱՀՈՒԶ

Վաչագան Վահրայան, Մաթեմատիկ, կենսաբանական
գիտությունների թեկնածու,
Մարինե Վահրայան, ինժեներ

Եվ ի՞նչ է անունը.
Վարդից վարդի հոտ է զալիս,
Վարդ անվանես այն թե ոչ:
Վ. Շեքսպիր

Կարծում եմ՝ ժամանակն է հատուկ ուսումնասիրմանք անդրադառնալ սյունիքյան հանրահայտ կառույցի անվանման խնդրին:

Ժամանակն է, քանի որ հայաստանյան պատմաբանների, հնագետների և ոչ միայն նրանց շրջանում, մի տեսակ գիտականորեն «պատվաբեր», մոդայիկ է դարձել ասե, որ. «Հուշարձանի անունը «Զորաց քար» է, այլ ոչ քե «Քարահունջ»։ Ընդ որում, այդ ասող մարդիկ, ոչ մի ուշադրություն չեն դարձնում հուշարձանի կառուցվածքագործանքային (structural-functional) հարցերին վերաբերվող խոշորագույն բացահայտումների վրա։ Մինչդեռ հենց դրանք են կարևոր։

Այս հարցին նվիրված մեր հոդվածներում բերված բոլոր փաստերը և մեկնությունները, այդ թվում նաև «Քարահունջ» անվանումը, մաթեմատիկական լեզվով ասած, միմյանցով պայմանավորված չլինելով, այնուամենայնիվ, ուղղակիորեն զուգամիտում են մի կետի։ Այդ միտումը պատահական համարելով դժվար է, քանի որ նման համընկնումների համատեղ ի հայտ գալու հավականությունը անտեսելու չափ փոքր է։ Ուրեմն, բերված փաստերի մեջ ներքին կապ գոյություն ունի։

Գիտական հետազոտության նպատակը միշտ էլ եղել և մնում է տարբեր երևությունների միջև առկա, բայց ոչ ակնհայտ կապերի երևա ն բերելը։

Այս քննարկման խնդրո առարկան Սիսիան քաղաքի մոտ գտնվող հանրահայտ մեզալիթյան կառույցի անվանման հետ կապված թնջուկն է։ Այսօր շրջանառության մեջ առկա է մի քանի անվանում՝ Զորաց քար (Վաչագան Վահրայան, Մարինե Վահրայան),

Քարահունջ (ակադեմիկոս Պ. Չերունին շրջանառության մեջ է դրել անցյալ դարի 90-ական թվականներին),

Ցից քարեր (ժողովրդական անվանում. լսել ենք Բռնակոթ գյուղում, նաև Երևանում՝ տարբեր քննարկումների ժամանակ),

Դիք-դիք քարեր (ժողովրդական անվանում. լսել ենք Բռուն, Վերիշեն գյուղերում

և Գորիս քաղաքում, նաև Երևանում՝ տարբեր քննարկումների ժամանակ)¹,

Անգողի Քարահունջ (մեր անվանումը. Լայն հանրությանը դեռ չի ներկայացվել):
Դիտարկենք այդ անվանումները մանրամասնորեն:

ԶՈՐԱՑ ՔԱՐ - ՂՈՉՈՒՆ ՂԱՇ

Հարցեր պարզելու համար՝

- Որտեղի՞ց է հայտնի «Ղոշուն դաշ» անվանումը:

Առաջին հարցը, որ ծագում է այս անվանումը լսելիս հետևյալն է. «Արդյո՞ք ճշգրիտ թարգմանություն է դա»: Պարզենք այս հարցը:

Կառուցի «Ղոշուն դաշ» անվան մեջ առաջին բառը ակնհայտորեն «Կօշոն» թուրքերեն բառն է և միարժեքորեն թարգմանվում է հայերեն որպես «Ճարք»: Անվանման դիտարկվող տարբերակի երկրորդ բաղադրիչը նույնպես թուրքերեն բառ է՝ «taş» և նույնպես միարժեք թարգմանություն ունի՝ «քար»: Այսպիսով՝ ստացվում է մոտավորապես հետևյալը՝ «Ճարքով [դասավորված] քար [եր]»:

Ստացանք արտաքին կառուցվածքային առանձնահատկությունն արտահայտող անվանում:

Աչքի է զարնում այն փաստը, որ թուրքերեն անվանման մեջ «քար» բառը ներկայացված է եզակի թվով, ինչն անտրամաբանական է: Ավելի բնական կլիներ «taşlar» հոգնակի ձևը: Եվ, ինչը շատ զարմանալի է, հենց այդպես՝ եզակի թվով այն թարգմանվել է հայերեն:

Այս հարցն անհասկանալի է մնում:

Առավել անհասկանալի է այն հարցը, թե ինչու՞ է «Կօշոն taş» թուրքերեն բառակապակցությունը թարգմանվել որպես «Զորաց քար»: Ի՞նչ հիմնավորմամբ է «Կօշոն» բառը թարգմանվել որպես «Զորաց»: Կա թուրքերեն «Կօշոնտ» բառ, որ նշանակում է «շքախումբ»: Յնարավոր է, որ թարգմանողը այս «շքախումբ» բառը ընկալել կամ ընդունել է որպես զորք, և հաշվի չառնելով «Կօշոնտ» և «Կօշոն» բառերի տարբերությունը, որոշել է վերջինս թարգմանել որպես «զորք» և այն էլ սեռական հոլովով ու գորաբարյան քերականությամբ, երևի հնության պատրանք ստեղծելու համար:

Ինչու՞ է դա արվել:

Հայաստանյան հնագետների մեծ մասը հակված է դամբարանադաշտ տեսնել

¹Տես Վահրամյան Վ., և Վահրամյան Մ., Քարահունջ հուշարձանի անվանման շուրջ. <http://lernci.livejournal.com/68672.html>, 2010

այդ կառույցի մեջ, նկատենք, ոչ մի հիմք դրա համար չունենալով: Կարելի է ենթադրել, որ կատարված «թարգմանությունը» կեղծիք է կառույցի անվանումը հայկականացնելու և այդպիսի գործանքայնություն (functionality) հաղորդելու նպատակով, իբր դա զորքի դամբարանադաշտ է, այլ կերպ ասած, գերեզմանոց:

Եթե դա այդպես է, ապա այդ դեպքում ի՞նչ բարոյական իրավունք ունեն «Զորաց քար» (իրականում՝ «Շարքով քար – Ղոշուն դաշ») անվանման կողմնակիցները (փակագծերում նկատենք՝ հիմնականում ոչ ճշգրիտ գիտությունների ներկայացուցիչները) այդ աստիճանի համառությամբ հիմքից մերժելու այլոց, շատ ավելի տրմաբանական և հիմնավորված կարծիքները:

- Ո՞վ է այն թարգմանել հայերեն որպես «Զորաց քար»: Ի՞նչ հիմքեր ուներ դա անելու:

ՔԱՐԱՎՈՒՆՑ

Ակադեմիկոս Պարիս Հերունին անցյալ դարի 90-ական թվականներից լայն շրջանառության մեջ դրեց Քարահունջ անվանումը: Հիմնավորումները հետևյալն են .

I. XIII դ. պատմիչ Ստ. Օրբելյանը իր «Սյունիքի Պատմությունը» գրքում Սիսական (Սիսիան) քաղաքի մոտ հիշատակել է Քարունջ անվամբ գյուղ:

II. Քարահունջ անվամբ գյուղ կա հուշարձանից, ուղիղ գծով, մոտ 29 կմ հեռավորության վրա, Գորիս քաղաքի մերձակայքում: Նույն անունով երկու գյուղ կա նաև Լեռնային Ղարաբաղի կենտրոնական և հյուսիսային մասերում: Ընդ որում, նրանցից մեկի մոտ կա մեզալիթյան կառույց, որը նույնպես ունի անցքերով քարեր: Այդ կառույցը Հերունու կողմից հետազոտված չէ:

III. Քարահունջ անվանումը արտացոլում է կառույցի գործանքային նշանակությունը: Այս մեկնաբանվում է որպես «խոսացող քարեր», նկատի ունենալով հետևալ անցումները. «հունջ» բառում «ջ» հնչյունը փոխարինվում է «չ»-ով ստացվում է «հունչ», այստեղից՝ «հնչել», հետո «խոսել»: Եզրակացություն՝ «Քարերը մեզ ինչ-որ բան են ասում աստղերի մասին»:

«Հաշվի առնելով վերը շարադրածը, ես անվանեցի կառույցը Քարահունջ»¹ , - գրում է մեծանուն գիտնականը:

¹Տե՛ս Հերունի Պ., Հայերը և հնագույն Հայաստանը. հիմքերը հայոց. արքակօստղագիտություն, լեզվաբանություն, հնագույն պատմություն, Երևան, 2006, էջ 19:

ՑԻՑ ՔԱՐԵՐ և ՂԻՔ-ՂԻՔ ՔԱՐԵՐ

Կարծում եմ՝ երկու անվանումներն ել կառուցվածքա-գործանքային իմաստ չեն կրում և առաջացել են այն ժամանակ, երբ կառույցն իր գործանքային նշանակությունն ու կիրառությունը վաղուց կորցրել էր։ Այդ պատճառով էլ արտահայտում են միայն կառույցի արտաքին տեսքը՝ քարերի կանգուն լինելը։

Կարևոր մի հանգամանք նշենք. երկու անվանումներում էլ «քար» բառը բերված է հոգնակի թվով, ինչը շատ բնական է։ Իսկ «Ղոշուն դաշ» անվանման և նրա հայերեն ուղղակի (սխալ) թարգմանության՝ «Ղորաց քար», բառակապակցության մեջ բերված է եզակի թվով։ Ինչն անբնական է թվում։

ԱՆԳՈՒ ՔԱՐԱՀՈՒԶ

Մանրամասնորեն դիտարկենք կարևոր մի քանի հանգամանք, որոնց մասին հպանցիկ արդեն նշել էինք։ Խոսքը «Ղոշուն դաշ» թուրքերեն անվան մեջ «դաշ»՝ «քար» բարի անբնական եզակի թվով ներկայացված լինելու մասին է։ Եվ ի տարբերություն դրան հայերեն ժողովրդական «Ցից քարեր» և «Ղիք-Ղիք քարեր» երկու անվանումների մեջ նույն իմաստն արտահայտելու համար օգտագործված «քար» բառի հոգնակի «քարեր» ձևի մասին։

Ինչպե՞ս դա բացատրել։

Ամենայն հավանականությամբ, «Ղոշուն դաշ» թուրքերեն արտահայտությունը թարգմանություն է հայերենից։ Որովհետև թուրքերը պետք է որ հարցրած լինեին, թե սա ինչպե՞ս է կոչվում։ Տեղացիները ասած պետք է լինեին և հետո էլ ասվածը բացատրելու համար պետք է որ թուրքերեն թարգմանած լինեին։

Ենթադրենք, թե դա բերված ժողովրդական անվանումների նման ինչ- որ մի անվանում էր։ Դա կարող էր լինել, ասենք, «Շարքով քարեր» արտահայտության նման մի բան։ Այդ դեպքում թարգմանությունը կլիներ «Ղոշուն դաշլար», այլ ոչ «Ղոշուն դաշ»¹։

Դարց տամք. «Ինչպիսի՞ն պետք է լիներ հայերեն հնագույն անվանումը, որպեսզի դրա թուրքերեն թարգմանության մեջ «քար» հասկացությունը արտահայտվեր ե-

¹Տես՝ Վահրայան Վ., և Վահրայան Մ., Քարահունջ հուշարձանի անվանման շուրջ. <http://lernci.livejournal.com/68672.html>, 2010.

գակի թվով» :

Դարցի ամենահավանական պատասխանը հետևյալն է. «Դայերեն անվանման մեջ «քար» բառը նույնպես պետք է ներկայացված լիներ եզակի թվով»: Դա կարող է լինել մի դեպքում, եթե հայերեն անվանման մեջ «քար» բառը մտներ որպես բարդ բառի երկու արմատներից մեկը: Օրինակ՝ «Քար-ա-շարք» բառի մեջ: Այս դեպքում թուրքերեն բարգմանությունը մեծ հավանականությամբ կլիներ հենց «Ղոշուն դաշ»:

Այսպիսով՝ ստացանք հայերեն հնագույն անվանման հավանական մի տարրերակ՝ «Քարաշարք»:

Սակայն, շարունակենք դատողությունները:

Բանասեր, հրապարակախոս Մարի Բարսեղյան-Խանջյանի բանավոր վկայությամբ թուրքերեն «ղոշուն» բառը հայերեն որոշ բարբառներում օգտագործվել է նաև «խումբ» իմաստով: Ստացվում է, որ հուշարձանի անվանման նախնական հայերեն ձևը կարող էր լինել «Քարախումբ» կամ նույն իմաստն արտահայտող «Քարափունջ» բառը, իսկ Սյունիքի բարբառով՝ «Քարահունջ»:

Այսպիսով՝ հուշարձանի հնագույն նախնական (նախաթուրքական) հայերեն անվանումը մեծ հավանականությամբ եղել է «Քարահունջ»: Դա բարգմանվել է թուրքերեն որպես «Ղոշուն դաշ» և այդ լեզվով հասել մեզ:

Դաշվի առնենք ևս մեկ կարևոր հանգանանք. Պ. Շերունին նշում է, որ պատմիչ Ստ. Օրբելյանը XIII դ. իր «Սյունիքի Պատմությունը» գրքում Սիսական (Սիսիան) քաղաքի մոտ¹, ուրեմն նաև հուշարձանի մոտ, Քարունջ անվանմամբ գյուղ է հիշատակել: «Քարահունջ» և «Քարունջ» բառերի նույնությունն ակնհայտ է:

Նշենք նաև, որ հիմա տարածաշրջանում երեք գյուղ կա նույն Քարահունջ անվանումով:

• Նրանցից մեկը Գորիս քաղաքի մոտ է գտնվում: Գյուղացիներից մեկի (հիմա նա բնակվում է Կիև քաղաքում) վկայությամբ, պատանի եղած տարիներին նա գյուղի մոտակայքում, բարձրունքի վրա, գետնից մոտ մեկ մետր բարձրությամբ քարերից կազմված մեզալիթյան շրջանաձև (մոտ 30 մետր տրամագծով) կառույց է գտել: Նշված վայրում հիմա երիտասարդ ծառերի անտառ է և խիտ փշոտ բուսականությամբ մացառուտ: Մի քանի ժամ անցկացնելով այդ վայրերում՝ մեզ չհաջողվեց գտնել և ֆիքսել կառույցը, սակայն նշված վայրում առանձին մի քար գտնվեց, որի վրա արհեստավարժ վարպետի ձեռքով բավական գեղեցիկ խաչ էր քանդակված: Սա հույս է ներշնչում, որ իսկապես այդ վայրում ինչ-որ սրբազն կառույց պետք է լինի: Դակառակ դեպքում, ի՞նչ գործ ուներ այնտեղ խաչքարը:

¹ Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծնթ. Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 395:

• Քարահունջ անվանմամբ երկրորդ գյուղը գտնվում է Ղարաբաղում՝ Շուշի քաղաքից ոչ հեռու: Ըստ Պ. Հերունու հաղորդած տվյալների՝ այդ գյուղի մոտակայքում կա նման տիպի մեզալիթյան կառույց, որը, սակայն, գիտնականը չի հետազոտել:

• Քարահունջ անվանմամբ երրորդ գյուղը նույնպես գտնվում է Ղարաբաղում՝ Շահումյանի շրջանում: Դիմա այդ տարածքը բռնազավթված է արևելյան թուրքերի (հայտնի են աղրբեջանցի անվամբ) կողմից: Դավանական է, որ այդ գյուղի մերձակայքում նույնպես մեզալիթյան կառույց գտնվի:

Ասվածը բավարար ենք համարում հետևյալ ամփոփումը կատարելու համար. «Քարահունջ» բառով, որ նշանակում է «քարե փունջ», հնում հայերը նշում էին մեզալիթյան շրջանաձև կառույցները: Նրանցից մի քանիսի անունով մերձակա գյուղերը կոչվել են Քարահունջ: Այսպիսով՝ «Քարահունջ» բառը հատուկ անուն չէ, այլ այդ տիպի կառույցների ընդհանրական անվանում:

Կոնկրետ մեր խնդրո առարկա կառույցի հատուկ անունը կարող է լինել «Անգղի Քարահունջ» քանի որ այն արտացոլում է Անգղի համաստեղությունը երկրի վրա և հավանաբար իր ծիսա-կրոնական գործանքի առունով նվիրված էր մահը խորհրդանշող «անգղի» և ծնունդը խորհրդանշող «ձվի» պաշտամունքին

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հերունի Պ., Հայերը և հնագույն Հայաստանը. իիմքերը հայոց. արքաեօաստղագիտություն, լեզվաբանություն, հնագույն պատմություն, Երևան, 2006:
2. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծնթ. Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:

ԴԱՍԱՑՈՒՑԱԿԱՆ ԿԱՅՔԵԶԵՐ

3.Վահրապյան Վ., և Վահրապյան Մ., Քարահունջ հուշարձանի անվանման շուրջ. <http://lernci.livejournal.com/68672.html>, 2010.

4.Վահրապյան Վ. և Վահրապյան Մ., Բրիտանիա կղզու առաջին բնակիչները եկել են Հայաստանից. «Ազգ» օրաթերթ, <http://www.azq.am/AM/20081018> :

ՔԱՐԱՀՈՒՆՁ- STONEHENGE. ԱՌԱՍՊԵԼԻ ՎԵՐՁ

Հրաչ Մարտիրոսյան
բանաս. գիտ. դոկտոր (Լեյլենի համալսարան)

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԻԱՐԺԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ պատմություն

Սիսիանի տարածքում գտնվող մեզալիթյան հուշարձանի անվան ստուգաբանության հարցերին անդրադարձել է լեզվաբան Հրաչ Մարտիրոսյանը: Այժմ ավելի մանրամասն անդրադառնանք նրա կատարած ուսումնասիրությանը:

2008 թվականի ամռանը, երբ ես Հայագիտական արշավային դասընթացներիս նախապատրաստական աշխատանքներով էի զբաղված, ձեռքս ընկավ մի գունավոր հայերեն-անգլերեն ատլաս (Գ. Բեգլարյան, «Ատլաս Հայաստանի և հարակից երկրների», Երևան, «Նոյյան Տապան», 2007) (Atlas: Armenia and adjacent countries): Դեռ այդ տարիներին Քարահունձ–Stonehenge առնչակցությունը բավականաչափ տարածված էր Հայաստանում: Այդ մասին վստահորեն խոսում էին փողոցում, հեռուստատեսային հաղորդումներում, համացանցում: Ուստի, ատլասը տեսնելով՝ առաջին հերթին մտքովս անցավ ստուգել, թե այնտեղ ինչպես է ներկայացված այդ մեզալիթյան հուշարձանը: Գտա հետևյալը.

«Զորաց Քարեր» կամ «Քարահունձ»՝ հնագույն աստղադիտարան (Ք.Ա. VII հզրմ.). «Zorats Karer» or «Karahunj» (Stonehanj) – Ancient observatory (VII mln B.C.):

Ինձ զարմացրեց ոչ այնքան Stonehenge-ի գրության նման ձևը՝ Stonehanj, որքան այն, որ այս հուշարձանի կեղծ՝ Քարահունձ անունը և դրա համադրումը Stonehenge-ի հետ արդեն սկսել են արտացոլվել տեղեկատու գրականության մեջ:

Քարահունձի «տեսությունը», որ սկիզբ է առել Էլմա Պարսամյանի և Պարիս Շերունու հետազոտություններով, նոր թափ առավ Վաչագան Վահրապյանի Ելույթներից ու CNN-ի հայտնի հաղորդումից հետո: Քանի որ այս «տեսությունը» սպառնում է ընդլայնվել ու իր մեջ ներառել նորանոր տարրեր և քանի որ այս «տեսության» մեջ վճռորոշ դեր է խաղում Քարահունձ–Stonehenge լեզվական առնչակցությունը, իսկ այս հայկական տեղանվան հարյուրամյա գիտական ստուգաբանությունը շարունակում է մնալ ստվերում, ապա լեզվաբանական միջամտության անհրաժեշտությունը դարձել է ակնհայտ:

Հուշարձանի հնագիտական և գործառութային քննությունն¹ իմ նպատակներից և իրավասությունից դուրս է: Այս հոդվածին նպատակն է բանասիրական հանգամանալից վերլուծությամբ ցույց տալ, որ Քարահունջ–Stonehenge առնչակցությունը բացարձակապես հիմնազուրկ է և, համենայն դեպքում, ինչպես հիմա ներկայացվում է, իրավունք չունի գոյատեսել նույնիսկ որպես վարկածային տեսակետ, և որ այս մեզարակական հուշարձանի ստեղծողներին հայոց լեզվի կրողների հետ նույնացնելու ոչ մի հիմք չունենք: Մեր մշակույթն առանց գունազարդման էլ շատ հետաքրքիր է ու բարձրարժեք, ուստի մեզ բոլորովին էլ պետք չէ թուղթ և ազերի կեղծարարների նման աղավաղել պատմությունը, սարքել անհերեթ «տեսություններ» ու այդ կերպ ծիծաղելիության աստիճանի նսեմացնել «հայաստանյան» հայագիտության վարկը:

2. Հուշարձանի իրական և սարքովի անվանումները

Սիսիանի և Անգեղակորի մերձակայքում գտնվող այս մեզարական հուշարձանը հիշատակված է տասնիններորդ դարի վերջերից՝ Ղոշուն-դաշ թուրքական անվանք, ընդ որում վերջինիս մեկնաբանությունը որպես «զօրքի կամ զինվորների քար» (կամ ռուսերեն «Войсковые камни») զուգորդվում է շրջակա ժողովրդի պատմության այն մասին, թե քարակույտերի ու կանգնեցված քարերի տակ թաղված են համապատասխանաբար զորապետների և զինվորների մարմիններ²: Ավելի հին որևէ անվանում հայտնի չէ: Զորաքարեր կամ Զորաց-քար անվանումը³ պարզապես թուրքականի թարգմանությունն է: Այս հուշարձանը մեզ հայտնի ոչ մի աղբյուրում չի կոչվել ոչ Քարահունջ, ոչ էլ Զորաքարեր կամ Զորաց-քար: Տեղանունների հայտնի հնգահատոր բառարանը չի հիշատակում դրանցից ոչ մեկը. այն ունի միայն Ղոշուն-դաշ⁴:

¹Այդ մասին տես՝ Լիսիւան Ստ., Կոշոն-даշ. Мегалитическое городище в Сисиане (Зангезур). Академия Наук СССР XLV Академику Н., Маррү. Изд. АН СССР, Москва, Ленинград, 1935, с. 709-721. Խնկիկյան Օ., Սիսիանի Զորաքարերը, «Հայաստանի բնություն» ամսագիր, 1984, № 4, էջ 33-34:

²Լալայեան Ե., Սիսիան. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար. Ազգագրական հանդէս. 3-րդ տարի, Գ գիրք, Թիֆլիս, 1898, № 1, էջ 174-175, Ղանալանյան Ար., Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 263: Լիսիւան Ստ., նշվ. աշխ., ս. 712-714, Խնկիկյան Օ., նշվ. աշխ., էջ 33: Մելիք-Շահնազարյանը (1893) Ղոշուն-դաշը ներկայացնում է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում գտնվող Ղարաքիլիսա գյուղի (այժմ՝ Ազատան, տես՝ Ղակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Յ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, (այսուհետ՝ ՀայՏեղԲառ) հտ. 3, Երևանի համալսարանի հրատ., 1991, էջ 544): Արամ Ղանալանյանը նույնպես սա ներկայացնում է որպես Սիսիանի մերձակայքում գտնվող Ղոշուն-դաշից (տես՝ Ղանալանյան Ար., նշվ. աշխ., էջ 263, 270) տարբեր հուշարձան: Եթե իրականում գործ ունենք նույն վայրի հետ, ապա գուցե շփոթի պատճառն այն է, որ, ինչպես նշում է Ե. Լալայանը (տես նշվ. աշխ., էջ 174), Սիսիանի Ղոշուն-դաշն էլ է գտնվում Ղարաքիլիսա անվանք մի գյուղի (այժմ՝ Սպանդարյան, տես ՀայՏեղԲառ 3. 544a) մոտ:

³ Խնկիկյան Օ., նշվ. աշխ., էջ 33:

⁴ Լիսիւան Ստ., Կոշոն-даշ. Мегалитическое городище в Сисиане (Зангезур). Академия Наук СССР XLV Академику Н. Я. Маррү. Изд. АН СССР, Москва, Ленинград, 1935, с 708-721.

Որոշ վկայությունների համաձայն մերձակա բնակիչները այս վայրն անվանում են Դիք-դիք քարեր կամ Ցից քարեր¹:

Ե. Պարսամյանը (Պարսամյան 1985) առաջինն էր, որ մեգալիթյան այս հուշարձանը համեմատեց անգլիական Stonehenge-ի հետ և վերջինիս անվանումը գուգադրեց նույնպես Զանգեզուրում գտնվող Քարահունջ գյուղի անվան հետ՝ ընդգծելով քար-stone և հունջ-henge («կախված») առնչությունները: Այս գյուղը, սակայն, գտնվում է Գորիսի մերձակայքում և բավականաչափ (շուրջ 30 կմ) հեռու է Ղոշուն-դաշից, և բոլորովին հասկանալի չէ, թե ինչ իրավունք ունենք այդ գյուղը համադրելու այդքան հեռու գտնվող մեգալիթյան հուշարձանի հետ, և այն էլ բոլորովին այլ երկրում գտնվող նմանատիպ հուշարձանի անվան միջնորդավորության համատեքստում: Այդուհանդերձ, այդ գուգակցումն արագորեն քաղաքացիություն ստացավ, և Քարահունջ անվանումն ուղղակիորեն ամրագրվեց այդ մեգալիթյան հուշարձանին: Յայաստանի Յանրապետության Կառավարության 2004 թ. հուլիսի 29-ի N 1095-Ն որոշման համաձայն հուշարձանը (իին անվանումը ներկայացված է՝ «անանուն», օբյեկտի տեսակը՝ «աստղադիտարան») անվանվել է Քարահունջ, տես ՀՀՊՏ 2004.08.25/45(344) հոդ.1008:

Քարահունջի հետագա հաղթարշավում մեծ դեր ունեցավ Պ. Յերունին²: Նա մեգալիթյան այս հուշարձանը վստահորեն կոչում է Քարահունջ և, առանց Պարսամյանին հիշատակելու, ընդունում է Քարահունջ–Stonehenge լեզվաբանական առնչակցությունը, սակայն հայերեն հունջ բաղադրիչը նույնացնում է հունչ արմատին և եզրակացնում, որ և Քարահունջը, և Stonehenge-ը նշանակում են «խոսող/հնչող քարեր»³: Շատ տարօրինակ է, որ այս տարածքից հեռու գտնվող Քարահունջ անվանք գյուղերը հիշատակելուց և ապա Սիսիանի մեգալիթյան հուշարձանի Քարահունջ շինծու անվանման իր այդ ստուգաբանությունն առաջադրելուց հետո նա էջ 19-ում գրում է. «Ելնելով վերը հիշատակված տվյալներից, ես անվանեցի Մոնումենտը Քարահունջ, այսինքն «խոսող քարեր»: Եթե ինքն է այդ անունը սարքել, ապա էլ ի՞նչ ինաստ ունի Stonehenge-ին համեմատելը: Ակնհայտ circulus vitiosus (փակ/արատավոր շրջան)...

Քարահունջ անվանումն այնպես հիմնավորապես է ամրագրվել մեգալիթյան հուշարձանին, որ մարդիկ արդեն մոռանում կամ շրջանցում են այն փաստը, որ այդ անունն արհեստականորեն է փակցվել: Յատկանշական է, օրինակ, Վահրապյանների

¹ Վահրապյան Վ., և Վահրապյան Մ., Քարահունջ հուշարձանի անվանման շուրջ. <http://lernci.livejournal.com/68672.html>, 2010:

² Տես Յերունի Պ., Յայերը և հնագույն Յայաստանը. իիմքերը հայոց. արքաեօստղագիտություն, լեզվաբանություն, հնագույն պատմություն, Երևան, 2006, էջ 17-19, 87-92:

³ Յերունի Պ., նշվ. աշխ., էջ 19, 90:

մոտեցումը. Սթունիենջի մասին խոսելով՝ նրանք գրում են. «Այդպիսի կառույց կանաեւ Յայաստանի Յանրապետության այժմյան տարածքում՝ Սյունիքում: Յայկական այս կառույցի առանձնահատկությունն այն է, որ (եւ դա ամենազարմանալին է) այն ունի նաեւ Սթունիենջին շատ նման անվանում՝ Քարահունջ եւ կառուցված է նրանից ամենաքիչը երեք հազար տարի ավելի վաղ»:

3. Քարահունջ տեղանվան ստուգաբանությունը

Այսպիսով՝ մեգալիթյան հուշարձանը երբեք չի կոչվել Քարահունջ: Վերջինս ընդամենը մի սովորական տեղանուն է՝ անվանումը քննվող հուշարձանի հետ ոչ մի առնչություն չունեցող մի գյուղի: Սակայն ամեն մի կասկած վերացնելու համար ստորև բանասիրական քննության կենթարկեմ այդ տեղանվան վերոհիշյալ ստուգաբանությունները, ցույց կտամ դրանց բացարձակ հիմնազուրկ լինելը և կներկայացնեն իսկական ստուգաբանությունը:

Ինչպես տեսանք, Է. Պարսամյանն առաջինն էր, որ Քարահունջը համեմատեց անգլիական Stonehenge-ի հետ՝ ընդգծելով քար-stone և հունջ-henge առնչությունները: Նա մի կողմից հունջին համեմատվող henge բաղադրիչը անգլերենի հենքի վրա մեկնաբանում է որպես «висящий»=«կախված» (ինչը հավանաբար ճիշտ է¹), մյուս կողմից էլ, Բ. Չուգասզյանի հաղորդման համաձայն, հունջը բխեցնում է փունջից՝ hunge< runge²: Պարզ չէ, թե ինչպես կարելի է հաշտեցնել այս երկու իրարամերժ ենթադրությունները:

Այս ենթադրյալ *հունջ բառը սկսում է քաղաքացիություն ստանալ և ներկայացվել որպես տեղական բարբառի իրական բառ: Վաշագան և Մարինե Վահրայանները (2008) գրում են. «Մենք հակված ենք «հունջ» արմատի իմաստը դիտարկել հայոց լեզվի տեղական՝ Սիսիանի բարբառի հիման վրա, որում «հունջ» բառը նշանակում է «փունջ» (Վահրայաններին):»: Այս տեսակետը վերջերս հանդես եկավ նաև, օրինակ, Գայանե Ավետիսյանի («Երկիր Մեղիա») CNN-ով ցուցադրված հայտնի ռեպորտաժում, որը տեղակայված է «YouTube»-ում: Այստեղ՝ Քարահունջ–Stonehenge ստուգաբանական առնչակցության համատեքստում, հայտարարվում է, որ «the second part հունջ in the local Syunik^c dialect means «bunch», Armenian փունջ»:

Քանի որ Վահրայանները սովորաբար աղբյուրներ չեն վկայակոչում, ուստի, ես ստիպված էի տեղական բարբառի այս *հունջ «փունջ» բառի գոյությունն ինքս ստուգել Ալ. Մարգարյանի «Գորիսի բարբառը» ընդարձակ աշխատության ծավալուն բա-

¹Տես <http://www.etymonline.com/index.php?term=Stonehenge>.

²Տես Պարսամյան Յ., О возможном астрономическом назначении мегалитических колец Ангелакота. Рյուրականի աստղադիտարանի հաղորդումներ, պրակ XLV, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1985, էջ 103:

ռարաններում և Սյունիքի ու Արցախի ազգագրական ու բանահյուսական նյութերի հիման վրա կազմած իմ քարտարաններում: Ոչ մի տեղ նման բառ չգտա: Ամենայն հավանականությամբ գործ ունենք հերթական արհեստածին բառի հետ: Քանի դեռ որևէ մեկը չի մատնանշել նման բառի վկայությամբ որևէ աղբյուր, պետք է *հունջ «փունջ»-ը համարել հիմնազուրկ Ենթադրությունից սարքված ուրվական բառ և այն դուրս նետել քննարկման ասպարեզից:

Ենթադրել այդպիսի նախաձեռ գոյություն փունջ բառի վերոհիշյալ առնչակցության հիման վրա ամիմաստ է. ակնարկվող *p-> *h- հնչյունական անցումը գործում է բնիկ հայկական, այսինքն՝ հնդեվրոպական ծագում ունեցող բառերի դեպքում իսկ փունջ բառի ծագումը, որքան ինձ հայտնի է, դեռ հստակված չէ¹: Չուզասցյանի Ենթադրությունը քիչ թե շատ հիմնավոր համարելու համար հարկ կլինի նախ կատարել կամ մատնանշել փունջ բառի հնդեվրոպական հավաստի ստուգաբանություն և ապա պարզաբանել կողք-կողքի փունջ և *հունջ բաղադրիչների գոյության հանգամանքները: Վերջապես անհավանական է, որ գյուղանվան հիմքում ընկած լինի «քարերի փունջ» իմաստը, որքան էլ գեղեցիկ ու բանաստեղծական լինի այն:

Ապա Վաչագան և Մարինե Վահրայանները (2010), Ղոշուն-դաշ-Զորաց-քար թարգմանությունը, պնդում են, թե այս անվանման մեջ «քար» բաղադրիչի եզակի թվով դրված լինելու անտրամաբանական է, և որ թուրքերն ուսուում բառը միայն նշանակում է «շարք»², մինչդեռ պարտավոր էին նախ, հետևելով գիտական տարրական բարեխորդության թելադրանքին, ստուգել, օրինակ, New Redhouse Turkish-English dictionary հեղինակավոր բառարանը, որից կիմանային, որ, բացի «line, row (of people)» նշանակելուց, այդ բառն ունեցել է նաև «troops, military forces», իմաստը³: Ավելին, հենց քննվող տարածքի՝ Սյունիքի բնակչության բարբառում, առկա է այդ թուրքերն բառից փոխառված դօշուն բառը «անթիվ՝ անհամար ամբոխ, զորք» նշանակությամբ⁴:

Վստահորեն առաջ ընթանալով՝ Վահրայանները նշում են, որ թուրքերն ղոշուն բառը հայերեն որոշ բարբառներում գործածվել է նաև «խումբ» իմաստով, և եզրակացնում, որ «հուշարձանի անվանման նախնական հայերեն ձևը կարող էր լինել Քարախունը կամ նույն իմաստն արտահայտող Քարափունջ բառը: Իսկ Սյունիքի բարբառով՝ Քարահունջ «...»: Դա թարգմանվել է թուրքերեն որպես Ղոշուն դաշ և այդ լեզվով

¹ Տե՛ս Աճառյան Յ., Հայերեն գալառական բառարան. Թիֆլիս («Էմինեան ազգագրական ժողովածու», ԽՍՀ, Թ), 1913: Աճառյանը հիշատակում է փունջ բառի ստուգաբանական մի շարք փորձեր և, դրանցից ոչ մեկը համոզիչ չհամարելով, բառի ծագման հարցը թողնում է բաց:

² Վահրայան Վ., և Վահրայան Ս., Քարահունջ հուշարձանի անվանման շուրջ.<http://lernci.livejournal.com/68672.html>, 2010

³ New Redhouse Turkish-English dictionary, 1968, p. 676.

⁴ Տե՛ս Մարգարյան Ալ., Գորիսի բարբառը, Երևանի համալսարանի հրատ., 1975, էջ 525:

հասել մեզ»: Փաստորեն, նրանք, որ քիչ առաջ նման մանր ու անհիմն ձևախմաստային նկատառումներով առարկում էին Ղոշուն-դաշ>Զորաց-քար թարգմանության դեմ, ոչ մի խնդիր չեն տեսնում «փունջ» նշանակությամբ *հունջ բառը (որ գոյություն էլ չունի) թուրքերեն «խումբ/շարք» բառով թարգմանելու մեջ, և հոգմակի դաշլար-ի փոխարեն եզակի դաշ-ի (անեական) հարցն էլ այլևս նրանց չի անհանգստացնում:

Տեսանք նաև, որ Պ. Յերունին Քարահունջ բառի հունջ բաղադրիչը նույնացնում է հայերեն հունչ արմատին և եզրակացնում, որ և Քարահունջը, և Stonehenge-ը նշանակում են «խոսող/հնչող քարեր»: Սակայն սա անընդունելի է, քանի որ 1) հունչ արմատը երբեք հանդես չի գալիս *հունջ տարբերակով¹ 2) սպասելի էր *հնչաքար. 3) և, որ ավելի կարևոր է, «խոսող/հնչող քարեր» բնիմաստի համար ոչ մի իմաստալից մեկնաբանություն չի ներկայացվում: Յերունին իր այդ տեսակետը շարադրելուց անմիջապես հետո գրում է.

Իրոք, այդ քարերը հին ժամանակների աստղագետներին շատ հետաքրքիր և կարևոր տեղեկություններ են հայտնել Տիեզերքի մասին, ինչպես հիմա էլ մեզ են ասում (և դեռ կասեն) բազում նոր ու անսպասելի տեղեկություններ հնագույն ժամանակների մասի»²:

Եթե սա կատակ կամ քնարական գեղում չէ, այլ որպես այդ ստուգաքաբանության իմաստաբանական իիմնավորում է մեզ հրամցվում, ապա մենք պետք է մեզ զգանք ծաղրի առարկայի դերում: Ի դեա՝ Գորիսի Քարահունջ գյուղի բնակիչներն ինձ ասուն էին, որ իրենց գյուղի անունը բաղկացած է քար և հունչ արմատներից և նախապես վերաբերել է գյուղի նշանավոր Շռան ջրվեժին (իսկապես հրաշալի ու աղմկոտ մի ջուրեժ, որի տակ լողանալը մեծ հաճույք է), որը թափվում է քարերի վրա և «հնչում» է³: Այս ստուգաքաբանությունն առաջադրվել է դեռ Ալիշանի կողմից⁴: Զերունու տեսակետին նույնական այս բացատրությունն, իհարկե, ժողովրդական ստուգաբանություն է և չի կարող գիտական համարվել: Սակայն նրանում, ի տարբերություն Յերունու տեսակետի, գոնե մի փոքր իմաստաբանական տրամաբանություն կա:

¹ Յայերեն արմատական բառարան (այսուհետ՝ ՅԱԲ), 4 հատորով, հատոր 3, (2-րդ հրատ.), Երևանի համալսարանի հրատ., (1-ին հրատ. 1926-1935, 7 հատորով) 1971-79, էջ 123:

² Տե՛ս Յերունի Պ., նշվ. աշխ., էջ 19:

³ Հմմտ. նաև ՅայՏեղթառ, էջ 315:

⁴ Տե՛ս Ալիշան Դ., Սիսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 262:

3.1 Քարունջ / Քարահունջ անունը կրող տեղավայրերը

Քարահունջ գյուղանունն ունի տեղանվաճական առումով շատ սովորական և բանասիրորեն միանգամայն անխոցելի ստուգաբանություն, որ ներկայացվել է ավելի քան մեկ դար առաջ, բայց մնացել է «մարտնչող տգիտության» տեսադաշտից դուրս:

Քարահունջ տեղանվաճական հնագույն վկայությունները գտնում ենք Յովիաննես Դրասխանակերտցու (9-10-րդ դդ.) և Ստեփանոս Օրբելյանի (13-14-րդ դդ.) պատմություններում: Երկուսում էլ այն հանդես է գալիս Քարունջ ձևով: Յովիաննես Դրասխանակերտցին այն հիշատակում է հետևյալ հատվածում (1912=1980. 332-333). «Իսկ Նսրն խարդաւանեալ զխորամանկութիւն և երկաքանչիւրս զնոսա շրթամբք, այլ ոչ սրտի՝ իւր յարակեալ, իրակիր երթեալ նոքօք ի մայրաքաղաքն Ղվին. «զի յապահովացեալք, ասէ՝ ի նմա իւրաքանչիւր ումեք՝ զիւրաքանչիւրոցն զօգուտն հոգալ մարթացուքե: Այսպէս ապա դաւոյ դրժոխութեան չու յուղի անկեալ գնային. իբրև մօտ եղեն ի քաղաքագիւղն Քարունջոյ՝ ընդառաջ լինէին նմա զլխաւոր գահերէցք և հոյակապ նահապետք ազգատոհմի քաղաքին Ղվնայ»:

Գ. Թոսունյանը թարգմանում է այսպես. «Իսկ Նսրը նրանց երկուսին էլ խորանանկորեն խաբելով և՝ խոսքով, ոչ թե սրտով կապելով իր հետ՝ նրանց իրավիրում է իր հետ գնալ Ղվին մայրաքաղաքը, «որպեսզի, ասում է, ամենքս էլ այնտեղ ապահով լինելով՝ կարողանանք հոգալ յուրաքանչյուրի օգուտի մասին: Այսպէս նենգորեն խարվելով և ճանապարհ ընկնելով՝ [նրանք] գնում էին: Եվ երբ մոտեցան Քարունջ քաղաքագյուղին՝ նրան [Յուսուֆին] ընդառաջ են գալիս Ղվին քաղաքի զլխավոր գահերեցներն ու ազգատոհմի հոչակավոր նահապետները»¹:

Գ. Թոսունյանը² (1996. 379, ծնք. 125) այս Քարունջ քաղաքագյուղը, որոշ անվատահությամբ, նույնացնում է Գորիսից ոչ հեռու գտնվող Քարահունջ գյուղին (Վերջինիս մասին տես ստորև): Սակայն քաղվածքից և տեքստի շարունակությունից երևում է, որ այն պետք է տեղայնացնել Ղվինի մերձակայքում, ինչն էլ անում է գերմանացի ականավոր հայագետ Յայնրիխ Յյուբշմանը³: Այսպէս է նաև ՅայՏեղԲառ-ի հատոր 5-ում, էջ 334:

Քարահունջ-Stonehenge «տեսության» հետևորդները վստահորեն պնդում են, թե մեգալիթյան հուշարձանի մասին առաջին գրավոր հիշատակությունը արել է պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: Իրականում Ստեփանոս Օրբելյանը Տաթկի վանքին հարկա-

¹Յովիաննես Դրասխանակերտցի, Յայոց պատմություն (աշխարհաբար թարգմ. և ծնք.Գ. Թոսունյանի), Երևանի համալսարանի հրատ., 1996, էջ 333-335:

²Տե՛ս նույն տեղում:

³Յիւբշման Յ., Յին Յայոց տեղույ անունները. Յայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին ուսումնասիրութիւններով (Տ. համան 1904-ից թարգմ. Յ. Բ. Պիլեգիկնեան). Վիեննա. Միսիթարեան տպարան («Ազգային մատենադարան» ԾԳ), 1907, էջ 421:

տու գյուղերի ծավալուն ցուցակում Սյունիքի Եւայլախ կամ Այլախ գավառի գյուղերի շարքում հիշատակում է Քարունջ անվանք մի սովորական գյուղ⁴, ոչ թե քննվող հուշարձանը: Այդ գյուղը սովորաբար նույնացվում է Գորիսի մերձակայքի Քարահունջ գյուղին: Իհարկե, այս նույնացումն անառարկելի չէ, քանի որ Եվայլախ/Այլախ գավառի կազմում Օրբելյանը հիշատակում է նաև Շաքեն ու Անգեղակորը, և, հետևաբար, կարելի է մտածել, որ այս գավառում հիշատակվող Քարունջն էլ Սիսիանի մերձակայքում էր գտնվում: Սակայն դժվարությունն այն է, որ Օրբելյանի այդ ցուցակում թվարկվող բոլոր գավառներից Եվայլախ/Այլախը միակն է, որ վկայված չէ «Աշխարհացույց»-ում, և դրա սահմանների մասին, ցավոք, գրեթե ոչինչ հայտնի չէ նաև ՀայՏեղԲառ-ում¹: Շատ հավանական է, որ այս նորակազմ գավառն ընդգրկում է Ծղուկ գավառի հվապ-արևելք՝ ներառնելով նաև Հաբանդի՝ Գորիսին մերձակա որոշ տարածքներ, այդ թվում՝ Գորիսից հարավ գտնվող Քարահունջ գյուղը, մինչդեռ Գորիսից ավելի հարավ ու արևելք մնացած Խնճորեսկ, Տեղ, Խոտ ու Ծնո-հերք (Ծինուհայր) գյուղերը շարունակել են մնալ Հաբանդի կազմում ու այդպես էլ ներկայացված են Օրբելյանի ցուցակում, իսկ ավելի հեռու՝ հարավում գտնվող Տաթևն էլ մնում է Ծղուկում (որտեղ, ի դեպ, նաև Սիսիանի այլ բնակավայրեր են ներգրավված՝ Տոլորք/ս, Լծեն և այլն): Մոտավորապես այս կերպ էլ, թեև ավելի հպանցիկորեն, այս գավառը ներկայացվում է Ալիշանի կոթողային «Սիսական» աշխատության մեջ: Հետևաբար միանգամայն հավանական է հայագիտության մեջ ընդունված այն տեսակետը, որ Օրբելյանի հիշատակած Քարունջ գյուղը Գորիսի մերձակայքի Քարահունջն է (այս Քար-ա-հունջ հոդակապով տարբերակն առաջին անգամ հիշատակում է Աբրահամ Կրետացին, 18-րդ դար)²:

Ի վերջո՝ եթե նույնիսկ պարզվի, որ Օրբելյանի Քարունջը նույնական չէ Գորիսի մերձակայքի Քարահունջին, այլ իրենից ներկայացնում է Սիսիանի մերձակա տարածքներում գտնված, այժմ ամայացած ու անհայտ մնացած որևէ գյուղ, ապա, միևնույն է, Օրբելյանի այս տեղեկությունը վերաբերում է ընդամենը գյուղանվան և չի կարող մեկնաբանվել որպես մեգալիթյան հուշարձանի անվանման ուղղակի վկայակոչություն, քանի դեռ մեր տրամադրության տակ չունենք համապատասխան պատմական աղբյուրներ:

⁴Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծնթ. Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 395:

¹Տե՛ս ՀայՏեղԲառ-ում, հ. 1, էջ 231:

²Տե՛ս Աշխ. էջ 209, 243, 244, 261, և հատկապես 262: Մարգարյան Ալ., Գորիսի բարբառը, էջ 4: Մարգարյան Ալ., Սի քանի տեղանունների մասին, ՊԲՀ 1988, № 4, էջ 123-130: ՀայՏեղԲառ, հատ. 5, էջ 314-315:

Բացի քննված բնակավայրերից, Քարահունջ անունն են կրում ևս երկու գյուղ՝ Ղարաբաղում³:

Նույն անվանումը կրող մի քանի տեղավայրերի առկայությունը, իհարկե, լրացրիշ խնդիր է հարուցում Քարահունջ-ը որպես մեզալիթյան հուշարձանի սպեցիֆիկ անվանում դիտարկող առանց այդ էլ տկար տեսակետների համար։ Հավանաբար այս դժվարությունը հաղթահարելու միտումով է Պ. Յերունին նշում, որ, բացի Գորիսի մերձակայքի Քարահունջ գյուղից, այս անունն է կրում նաև երկու գյուղ՝ Լեռնային Ղարաբաղում, որոնցից «մեկի մոտ ժայռերի մեջ հնուց անցքեր են բացված (դեռ չհետազոտված)»¹։ Այս մշուշոտ տեղեկությունը մեզ դեռ ոչինչ չի ասում։ Ի դեպ, Յերունին այստեղ հիշատակում է պարզապես ժայռերի մեջ բացված անցքեր, մինչդեռ Յերունու ստուգաբանությունը ներկայացնելիս Վահրայան/Վահրայան 2010-ում չգիտես ինչու սա դարձել է «մեզալիթյան կառույց, որը նոյնաեւ ունի անցքերով քարեր»։ Անհասկանալի է՝ սա Յերունու գրածի աղավաղումն է, թե Վահրայաններն իրենք են կատարել այդ ճշգրտումը։ Նման ոճով գիտական հարցեր չեն լուծվում։

3.2 Քարունջ /Քարահունջ տեղանվան բանասիրական և ստուգաբանական քննություն

Քարունջ տեղանունը կազմված է քար և ունջ բաղադրիչներից։ Առաջինի հարցը պարզ է, մինչդեռ երկրորդի համար ձևի առումով կա երեք թեկնածու՝ 1) ունջ «տակ, խորք, հատակ, գետնի տակը», 2) ունջ «գանձ» և 3) ունջ «մուր, ժանգ»²։ Այս երեք համանունների ծագումնաբանական կապն անհնար չէ, եթե առաջինն ընդունենք որպես ելակետ և երկրորդն ու երրորդը բխեցնենք նրանից՝ ենթադրելով «գետնի տակ բաղված գանձ» և, տականք, նստվածք բնիմաստներ։ Երեք ունջ-երից երրորդը ունջ ու օնջ ձևերով և «մուր» ու «ժանգ» իմաստներով ներկա է հատկապես արևելյան և հարավարևելյան եզրային բարբառներում՝ Գորիսի, Մեղրու, Ղարաբաղի, Շամախու, Արեշի, Կոզենի և այլն։ Մյուս երկու ունջ-երը բարբառներում պահպանված չեն³։

3. Յյուբշնանը⁴ Քարունջ տեղանվան երկրորդ բաղադրիչն իրավացիորեն նույնացնում է ունջ «տակ», խորք, «հատակ» բառին, որը նա տեսնում է նաև Սյունիքի մեկ

³ ՅայՏեղԲառ, նույն տեղում։ Նման է հնչում նաև Լոռվա աշխարհում՝ Զաթինդաղ լեռան լանջին գտնվող մի գյուղի անունը՝ Քարինջ (տես նույն տեղում, էջ 326)։

¹ Յերունի Պ., նշվ. աշխ., էջ 18։

² ՀԱԲ, հ. 3, էջ 604-605։

³ Այս համանունների բանասիրական ու ստուգաբանական քննության շուրջ տես Martirosyan Hr., Etymological dictionary of the Armenian in herited lexicon. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series, 8) 2010, p 638-641, 703-704, 814-815.

⁴ Յիւբշնան Յ., նշվ. աշխ., էջ 284, 421։

այլ գյուղանվան՝ Արփ-ունց(ն)-ի¹ կազմում: Յյուբշմանը բարդության բնիմաստը համարում է «Steinboden=քարայատակ»: Սակայն ավելի հավանական կլիներ «քարի տակ»-ը, մանավանդ որ այդ լուծման օգտին է խոսում ունջ բառի համար հենց Յյուբշմանի հիշատակած տեքստային իյուստրացիան՝ Փավստոս Բուզանդ 4.Ժը: Ստորև բերում են բնագրի այդ հատվածը, ապա՝ դրա աշխարհաբար² և անգլերեն թարգմանությունները³:

–համարեցան զգօրն եղբօրն՝ թէ խաղաղութիւն է եկն նորա, մինչ իջին առ խորանին դուրս, զի էր հարեալ զխորանն ի ձոր յունջ բերդին (ընդգծումն իմն է՝ ՀՍ):

– «մտածեցին թէ եղբոր զորքն է, եկել է խաղաղության համար: Այս կերպով հասան մինչև վրանի դուռը, որովհետև (Վարդանը) վրան էր զարկել բերդի տակ, ձորում»⁴:

– “because they thought that these were the forces of his brother coming in peace. [And they remained so] until they came to the very doors of [Vardan’s] tent, for the tent was pitched in the gorge beneath the fortress”. Ավելի քան ութ տասնամյակ անց Ալ-Մարգարյան⁵, Յյուբշմանից անկախ, առաջարկեց նույն ստուգաբանությունը՝ իմաստը մեկնաբանելով հենց որպես «քարի տակ, քարի ստորին կողմը», որը, ինչպես նա գրում է, «աշխարհագրորեն միանգամայն ճիշտ է և համապատասխանում է անգամ գյուղի այսօրվա դիրքին: Քարահունջ գյուղի գլխավերևը առ այսօր էլ կանգուն կա մի վիթխարի-հսկայական քարազանգված, որը և լավագույն վկան ու ապացույցն է այն բանի, որ այն իսկապես ստեղծվել է նրա ստորին՝ ցածրադիր մասում»:

Սա ակնհայտորեն շատ բնական բացատրություն է տեղանվան ծագման համար: Բավական է իիշել այնպիսի տեղանուններ ինչպիսիք են՝ Բերդատակ-ը Սյունիքում և այլուր⁶ն Քարատակ-ը Սյունիքում, Ղարաբաղում և այլուր⁷: Քարունջ տեղանվան այս ճիշտ ստուգաբանությունն արտացոլված է նաև ՅայՏեղԲառ-ում⁸:

Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղի մերձակայքում է գտնվում Բրդահոնջ-ը՝ ահռելի ժայռաբեկորների վրա գտնվող մի բերդ (Բրդահոնջին-դալա)՝⁹:

¹ ԱլիշանԴ., նշվ. աշխ., էջ 64, 76; ՅայՏեղԲառ, հտ. 5, էջ 514: Յետաքրքիր է Ալիշանի նկարագրական արտահայտությունը՝ «յունջ մի ցամաքի»:

² ՏեսՓավստոս Բուզանդ, Յայոց պատմություն (բնագիրը թ. Պատկանյանի, թարգմ. և ծնթ. Ստ.Մայլխասյանցի), Երևանի համալսարանի հրատ., 1987, էջ 201:

³ Garsoian N., The Epic Histories attri uted to P’awstos Buzand (Buz nd r n P tmut’iwnk’): translation and commentary. Cambridge 1989 ge. Harvard University Press, 1989, p 149.

⁴ Տես Փավստոս Բուզանդ, նույն տեղում:

⁵ Տես Մարգարյան Ալ., Մի քանի տեղանունների մասին, էջ 129:

⁶ Ալիշան Դ., նշվ. աշխ., էջ 209, Յիւբշման Յ., նշվ. աշխ., էջ 286, 324: ՅայՏեղԲառ, հտ. 1, էջ 666-667:

⁷ Տես Մակար Բարխուդարյան (Բարխուտարեանց), Արցախ. Ստեփանակերտ. «Մունք», (օրիգ. հրատ. Բագր.), 1995, էջ 87: ՅայՏեղԲառ, հտ. 5, էջ 321, 326

⁸ ՅայՏեղԲառ-ում, հ. 5, էջ 315, 334:

⁹ Մակար Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 87-88: ՅայՏեղԲառ, հտ. 1, էջ 741:

Ամենայն հավանականությամբ սրա հիմքում ընկած է *բերդ-ա-հ-ունց «բերդի տակ» բարդությունը, որը, ըստ բաղադրիչների ստուգաբանության, նույնական է Փափստոս Բուզանդի վերոհիշյալ յ-ունց բերդին բառակապակցությանը: Մեղրի քաղաքի բնակիչ Լևոն Միրզոյանի սիրալիր հաղորդման համաձայն Մեղրի քաղաքում կա Բըրդիօնց (արտասանական այլ տարբերակներ՝ Բըրդըհունց և Բըրդօնց) անվամբ մի վայր (հիշատակված չէ ՀայՏեղԲառ-ում): Այստեղ նախկինում մեծ, բարձր ժայռի վրա գոյություն է ունեցել բերդ-ամրություն¹, որից էլ ժայռի ներքեւ հատվածը ստացել է Բըրդիօնց անվանումը: Ինչպես իրավացիորեն մեկնաբանում է Լևոն Միրզոյանը, սա ավելի է հաստատում *Բերդահունց տեղանվան վերոհիշյալ ստուգաբանության ճշմարտացիությունը:

3.3 -հ- հնչյունի հարցը

Ալ. Մարգարյանը² Ենթադրում է, որ Քարունց տեղանվան Երկրորդ՝ ունց բաղադրիչը ժամանակի ընթացքում հավելվել է հ- սկզբնահնչյունով (հմնտ. ընկեր>հինգ-էր, ընտրել>հընդրէլ և այլն), որի պատճառով էլ Քար-ունց անհոդակապ բարդությունը վերածվել է հոդակապով բարդության՝ Քար-ա-հունց: Այս մեկնությունը Ենթադրում է, որ վերջին մի քանի դարերի ընթացքում ունց «տակ, խորք, հատակ» բառը տեղի՝ Գորիսի բարբառում գոյություն է ունեցել, վերածվել է *հունց-ի և ապա մոռացության տրվել: Սակայն ունց «տակ, խորք, հատակ» բառը չի պահպանվել ոչ Գորիսի, ու Ղարաբաղի, ոչ էլ որևէ այլ բարբառում: Այն տեղաբնիկների համար անթափանց ու անհասկանալի է և քարացած կերպով ժառանգվել է միայն քննվող տեղանվան կազմում: Այնպես որ հ-նախահավելվածով Երկրորդային բարբառային նման ձևի գոյությունը քիչ է հավանական: Նշենք նաև, որ ունց-ի մյուս՝ «մուր, ժանգ» իմաստն ունեցող համանունի բարբառային ոչ մի ներկայացուցիչ այդպիսի նախահավելված հ- չունի, այսինքն՝ չկան *հունց կամ *հօնց ձևեր, այլ կան միայն ունց և օնց:

Ինձ ավելի հավանական է թվում, որ հ հնչյունն այստեղ պարզապես Երկու ձայնավորների միջև առաջացող հորանց է (glide, hiatus), հմնտ. գի ծառանուն +-ի ծառածանց = գի-հ-ի, դայեակ > բրբռ. դահեկ³:

Քանի որ Քարահունց-ի դեպքում կապվող ձայնավորներից (-ա-ու-) Երկրորդը շրթնային է, հատկանշական են հատկապես հետևյալ օրինակները. լեզովն բառը «Անկանոն գիրք նոր կտակարանաց»-ում և «Յայսմաւորք»-ում հանդես է գալիս լեզ-

¹ Լևոն Միրզոյանը վկայակոչում է Գուրգեն Վաշյանին՝ տարեց մի մարդու, որ բնիկ մեղրեցի է և շատ լավ տեղյակ Մեղրու պատմությանը:

² Մարգարյան Ալ., Մի քանի տեղանունների մասին, էջ 129:

³ Stev Martirosyan Hr., Etymological dictionary of the Armenian inherited lexicon, p 211-212, 233.

Եհոն ձևով (ՂԱԲ 2. 271b).քանի որ -հ- չունեցող լեզովն ձևը բազմիցս վկայված է ուկ-երարյան էտապից սկսած և ելակետային է նաև ստուգաբանական տեսակետից (հմնտ.փոխատու հուն. λεγεօն [λεγεών] բառաձև), ապա լեզեհոն երկրորդային ձևի մեջ անկասկած գործ ունենք ստուգաբանական արժեք չունեցող -հ- հորանջի հետ¹:

Սիո(վ)ն լեռնանունը «Գիրք մնացորդաց»-ում (1-ին գիրք, Ժա.5) հանդիպում է Սիհովն ձևով², որին հունարեն բնագրում համապատասխանում է Σιων / Siōn ձևը³:

Նմանատիպ միջնահավելվածային -հ- դիտվում է նաև ազնավոր-ի կողքին առկա ազնահուր և անձնահուր «մի առասպելական էակ» բարբառային բառաձևերի կազմում: Այս դեպքում, սակայն, ժողովրդական ստուգաբանությամբ հուր «կրակ» և/կամ հուրի «ոգի, փերի» բառերի առնչակցությունը նույնպես կարող է դեր ունեցած լինել:

Յորանջի հստակ դեպքեր գտնում ենք նաև Ղարաբաղի բարբառում. օրինակ՝ երկու-հ-ինջի «երկրորդ», որ կազմված է երկու թվականից և դասական թվականներ կերտող թուրք. -Incl ածանցից⁴:

4. Հավելյալ քննարկում

4.1 Ստուգաբանական սկզբունքներ

Այսպիսով՝ Քար(ահ)ունջ անվանումը ոչ մի ընդհանրություն չունի քննվող մեզալիթյան հուշարձանի հետ, հետևաբար Stonehenge-ի հետ ստուգաբանական առնչության մասին խոսք լինել չի կարող: Դա պարզապես մի սովորական տեղանուն է, Յայաստանի ու Արցախի տարածքի չորս բնակավայրերի անվանում, որը կազմված է ինչպես ցույց է տրվել Յ. Յյուբշմանի (1904) և Ալ. Մարգարյանի (1988) կողմից, քար «քար» և ունջ «տակ, խորք, հստակ» բաղադրիչներից:

Զարմանալի է թվում, որ այս հստակ ստուգաբանությունը միշտ անտեսվել է վերջին տարիներին այս տեղանվան ծագմանն անդրադարձած պրակտիկորեն բոլոր մարդկանց կողմից: Իրականում, ցավոք, դա այնքան էլ արտասովոր չէ. բանասիրական գիտելիքներ չունեցող մարդիկ սովոր են զավեշտական համարձակությամբ ու թեթևությամբ լեզվաբանական «հարցեր լուծել»՝ ելակետ ունենալով միայն ազգակենտրոնությունը և թույլ տալով աններելի սխալներ: Տվյալ դեպքում այդ սխալներն արդյունք են հետևյալ տարրական բանասիրական սկզբունքների անտեսման.

¹Հմնտ. նաև երգիոն բարի երգեհոն և երգելուն տարբերակները (ՂԱԲ 2. 43-44):

²Մանրամասն տե՛ս Խալաթեանց Գ., Գիրք մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան. Մոսկուա. Տպարան Վարդվառէ Գատցուկ, 1899, էջ 22:

³Rehlf's Al., Septuaginta. Stuttgart: Deutsche Bibelgesellschaft, 1935, p 776.

⁴Տե՛ս Ղավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966, էջ 125-126:

1) չի կարելի անդրադառնալ հայերեն որևէ տեղանվան ծագման խնդրին առանց նախ ստուգելու Հյութշմանի «Հին Հայոց տեղույ անունները» աշխատությունը (1904, հայ. թարգմ.՝ 1907, որը, իին ու թերի լինելով հանդերձ, մնում է հայոց տեղանունների միակ գիտական ստուգաբանական բառարանը), ինչպես նաև իինգ հատորից բաղկացած ՀայՏեղԲառ-ը.

2) չի կարելի փորձել ստուգաբանել որևէ տեղանուն առանց նախ հստակեցնելու այն հարցը, թե արդյո՞ք այդ տեղանունն իսկապես տվյալ վայրի անվանումն է.

3) չի կարելի որևէ տեղանուն ստուգաբանելիս որպես ելակետ ընդունել տարբերակներից միայն մեկը (տվյալ դեպքում՝ Քարահունջ-ը) և անտեսել մյուս տարբերակ(ներ)ը, հատկապես եթե վերջին(ներ)ը ավելի հին է/են (տվյալ դեպքում՝ Քարունջ-ը):

Հետաքրքիր է, որ, Պարիս Շերունին Քարահունջ-ը մեկնաբանում է որպես «խոսող/հնչող քարեր» (հունչ>հունջ), սակայն Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Քարունջ գյուղանունը ստուգաբանում է որպես «քարե գանձ» կամ «հիմնաքարեր»¹ - այսպիսով այն սխալաբար տարանջատելով Քարահունջ-ից: Ակնհայտորեն նա նկատի ունի հայերեն ունջ «գանձ» և ունջ «տակ, խորք, հատակ» բառերը: Փաստորեն, նա որոշ չափով մոտեցել էր գիտական ստուգաբանությանը և կարող էր հասնել դրան, եթե չառաջնորդվեր իր կանխակալ համոզմունքներով և հետևեր վերոհիշյալ տարրական սկզբունքներին:

4.2 Նոր զարգացումներ

Քարահունջ–Stonehenge «տեսությունը» անընդհատ զարգանում է ու իր մեջ ներառուն նորանոր գաղափարներ: CNN-ի վերոհիշյալ հայտնի ռեպորտաժում աստղաֆիզիկոս Գրիգոր Բրուտյանը Քարահունջի հետ է համեմատում «պատմական Հայաստանի տարածքում» գտնվող և մ.թ.ա. 11-րդ հազարամյակով թվագրվող Gubekli Tepe հուշարձանը, որի հայերեն անվանումն է համարվում Պորտասար: Մարի Բարսեղյան-Խանջյանը բացահայտորեն Գյորելի-թեփե անվանումը համարում է «քուրքացված» և այն տեղակայում է «թուրքիայի կողմից բռնազավթած հայկական տարածքներում»:

Ես չգիտեմ, թե ում է պատկանում այս գաղափարի առաջնության «դափնին»: Այն արտացոլված է, օրինակ, Արմեն Ղավթյանի «Շումերական գաղափարագրերը խոսում են հայերեն» վերնագրով դասախոսության մեջ (2007-ի ապրիլի 19, Լու-Անջ-

¹ Հերունի Պ., նշվ. աշխ., էջ 18-19:

ելես): Այդ մասին հաճախ խոսում է Վաչագան Վահրապյանը: Բայց այստեղ էական է այլ բան: Ինձ համար անհասկամալի է, թե ինչպես կարող է ՈՒռիա (Եղեսիա) հայտնի քաղաքի մերձակայքում գտնվող այս վայրը հայտարարվել «պատմական Հայաստանի տարածք»: Եվ հետո՝ նման տեղանուն չկա Հայաստանի ու հարակից շրջանների տեղանունների ամենամեծ քառարանում (ՀայՏեղԲառ) կամ ինձ հայտնի որևէ այլ աշխատանքում: Նման հայկական տեղանուն պարզապես չկա (Եթե մեկը կուզի հակառակն ապացուցել, թող աղբյուր մատնանշի): Մեր աչքի առջև, ճիշտ Քարահունջի նման, արհեստականորեն սարքվել է ու աստիճանաբար քաղաքացիություն է ստանում ևս մի ուրվական տեղանուն: Մենք պարտավոր ենք պարզապես դեն նետել Պորտասար անվանումն ու այդ վայրն անվանել իր Gubekli Tere անվամբ:

Ֆիզիկոս Պարիս Յերունու գործն այժմ շարունակում է նրա աշակերտ Գուրգեն Վարդանյանը՝ ՀՀ ԳԱԱ գիտաշխատող, «Քարահունջի աստղադիտարան» կազմակերպության համանախագահը¹: Գուրգեն Վարդանյանի «Քարահունջ աստղադիտարան» վերնագրով հոդվածը², որտեղ ասվում է. «Հուշարձանի մասին առաջին գրավոր հիշատակությունը արել է պատմիչ Ստեփանոս Օրբելյանը (13-14-րդ դդ.): Ըստ այդ հիշատակության՝ հուշարձանի անունը Քարունջ (Քարահունջ) է: 18-19-րդ դարերուն հուշարձանը ստացել է «Զորաց Քարեր» անունը (գրաբարում «զօր» նշանակում է «օր», այսինքն՝ օրերի քարեր, օրացույց քարեր»):

Պարզապես ապշեցուցիչ է, թե ինչպես կարելի է ընդամենը երեք տողում այսքան հիմնազուրկ ու անբարեխիղծ դատողություններ և կոպիտ անցշտություններ տեղավորել, այն էլ այնպիսի վստահ ու անկաշկանդ տոնով, կարծես սովորական ճշմարտություններ են թվարկվում: Իրականում, ինչպես տեսանք, Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է ոչ թե քննվող մեգալիթյան հուշարձանը, այլ Տարեկի վանքին հարկատու բազմաթիվ գյուղերից մեկը, որը սովորաբար նույնացվում է Գորիսի մերձակայքի Քարահունջ գյուղին: Յետո՝ պարզ չէ, թե ինչ աղբյուրների հիման վրա է եզրակացվում, որ 18-19-րդ դարերուն հուշարձանն արդեն կոչվում էր Զորաց Քարեր: Նման վկայություններ ինձ հայտնի գրականության մեջ երբեք չեն հանդիպել: Եթե այնուամենայիվ կան աղբյուրներ, ապա պետք է մատնանշել որպանք: Հատկապես ֆանտաստիկ է «օրացույց քարեր» մեկնաբանությունը (այն նույնական է Վահրապյանների առաջարկած մեկնությանը): Գրաբարում զ-օր գոյական ինձ հայտնի չէ. կա միայն ժամանակի պարագայի գործառույթով {զ + հայց.հոլ.} կաղապարը ինչպես գրաբար-

¹Տես, Carahunge Voi e of Ameri a.mp4” <http://www.youtube.com/watch?v=VkJAdkMIZIKA>; ,Stars & Stones 2010 - Voi e of Ameri a” http://www.youtube.com/watch?v=AuOxNyH9_GQ&feature=related:

²Տես <http://on.fb.me/dOyfks> :

ում³, այնպես էլ բարբառներում⁴:

Ինչպես տեսանք, Զորաց-քարեր անվանումը պարզապես հայեցված տարբերակն է Ղոշուն-դաշ-ի, որն իսկապես նշանակում է «զորաքար»: Տեսականորեն անհնար չէ, որ մինչև 19-րդ դարի վերջերը գոյություն ունեցած լինի Ղոշուն-դաշ-ից ավելի հին որևէ հայկական անվանում: Բայց քանի դեռ որևէ վկայություն գտնված կամ մատնանշված չէ, ապա պարզապես պետք է լրել:

5. Մի քիչ հնդեվրոպաբանություն

Քանի որ Զարահունջ—Stonehenge և հարակից «տեսությունները» հավակնում են հայոց լեզվին վերագրել բացառիկ ու աստվածային բնույթ, անհրաժեշտ է հիմա մի քիչ պարզաբանել, թե դրանք ըստ էության գիտական ինչ կառուցի հետ են հակադրվում:

Հայերենը համարվում է հնդեվրոպական լեզու, այսինքն՝ պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, ինչը նշանակում է, որ հայերենը ցեղակից է խեթերենին, թոխարերենին, սանսկրիտին (իին հնդկերեն), պարսկերենին, հունարենին, լատիներենին, գերմաներենին, իուլանուերենին, ռուսերենին, լիտվերենին և մի շարք այլ լեզուների, այսինքն՝ սերում է բոլոր այս լեզուների նախամայր լեզվից: Դա աներկայելիորեն հաստատվում է իիմնական բառաֆոնից կազմող հարյուրավոր բառային ընդհանրություններով ու քերականական կառուցվածքով, ընդ որում հայերենի ու ցեղակից լեզուների համադրվող բառերի ու քերականական ձևույթների միջև առկա է երկալան (ձևին իմաստի) ներդաշնակություն, իսկ հնչյունական համապատասխանությունները սիստեմատիկ են:

Հնդեվրոպական արմատների վերակազմության մեթոդաբանության և օրինաչափ հնչյունափոխությունների մասին պատկերացում կազմելու համար դիտարկենք մի քանի օրինակ:

Սամսկրիտ մātēr, հուն. μήτηρ (ηηրիական բάτηρ [mātēr]), լատ. māter, անգլ. mother և մի շարք այլ ցեղակից բառաձևեր նշանակում են «մայր» և թույլ են տալիս վերականգնել հնդեվրոպական նախալեզվի «մայր» նախաբառը հետևյալ տեսքով՝ *mātēr: Հայերեն մայր բառը նույնպես, անկասկած, ժառանգել ենք այդ արմատից: Կարող ենք եզրակացնել, որ հնդ-եվր. *-t- ատամնային պայթականը միջնայնավորայ-

³ Տես Զալթխեան Յ., Քերականութիւն հայկազնեան լեզուի (հանդերձ փոփոխմամբք և յաւելուածովք աշխատասիրեալ ի Յ. Արսենէ Վ. Այտընեան). Վիեննա. Սիսիթարեան Տպարան, 1885, էջ 242-244, Խաչատրյան Գ., Գրաբարի շարահյուսության ձեռնարկ. Կիրովական. Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ (ձեռագրի իրավունքով), 1989, էջ 66:

⁴ Յմնտ., օրինակ, Ախալցխա օօրը (մկր.) «ցերեկը», տես Աճառյան Յր., Հայերեն գաւառական բառարան. Թիֆլիս («Եմինեան ազգագրական ժողովածու», հտ., Թ), 1913, էջ 328:

ին դիրքում հայերենում ընկնում է:

Եվ իսկապես, այս հնչյունական զարգացումն օրինաչափորեն նկատվում է նաև այլ ննանատիպ դեպքերում, օրինակ՝ հնդեվրոպական * pātēr «հայր» արմատի ժառանգներն են հուն.πατήρ [pātēr], լատ. pater, թոխար. Brācer, անգլ. father, հայերեն հայր և այլն: Այստեղ տեսնում ենք նաև մեկ այլ հնչյունական զարգացում.բոլոր լեզուներում բառասկզբի բաղաձայնն է *p-, մինչդեռ հայերենում այն վերածվել է h-ի: Սա ել իր հերթին հաստատվում է համապատասխան այլ օրինակներով, ինչպիսիք են.

Իերու «անցյալ տարի»— հմնտ.հուն պέρνու, դոր.պέրնու [perutij], սամս.parut «անցյալ տարի».

Իուր «կրակ» – հմնտ.խեթ. ῥاهհур, հուն.πύρ, սեռ. հոլ.πύρ-օս (pur-ós = հայերեն սեռ. հոլ. հր-ոյ), h-իսլ.furr«կրակ»:

Սակայն երբ այդ նույն *t պայթականը հայտնվում է *t ձայնորդին կից՝ նախորդող դիրքում, ապա այն հայերենում այլ կերպ է արտացոլվում. ստացված *-tr- հնչյունախումբը վերածվում է -լր-ի: Հմնտ. հայ. հայր բառի սեռական հոլովածնը՝ հաւր (= հօր), որ բխում է հնդեվրոպական սեռական հոլովածնից՝ *patr-ós, որից ծագում են հուն. πατρός [patrós], լատ. patris և այլն: Նույն կերպ՝ մայր բառի սեռական հոլովածնը՝ մաւր (=մօր) համադրելի է հուն. μητρός և լատ. mātris ձևերի հետ: Նույն *-tr->-լր- հնչյունական համապատասխանությունը դիտելի է նաև, օրինակ, հայերեն արաւր «արոր» բառում, որի ցեղակից ձևերն են՝ հուն. ῥροտրոν [arotron], լատ. arātrum, մ-իոլ. arathar, h-իսլ. arστ և այլն:

Երբեմն համեմատվող ձևերի նմանությունը որոշ չափով խաթարված է լինում իրար հաջորդած հնչյունափոխություններով, ուստի դրանց կապն ակնհայտ չի թվում: Սակայն համեմատական մեթոդի օգնությամբ հնարավոր է քայլ առ քայլ ցույց տալ տվյալ ստուգաբանության ճշտությունը: Օրինակ՝ սամսկրիտ bhatar t r-, լատ. frāter, անգլ. brother և ցեղակից մյուս բառերը, որոնք բոլորն ել նշանակում են «եղբայր», մատնանշում են նախահնդեվրոպական նախածնի երբեմնի գոյությունը, որը կարող ենք վերականգնել այսպես՝ *b^hrātēr «եղբայր»: Հնդեվրոպական այդ արմատից է բխում նաև հայերեն եղբայր բառը, սակայն նրանում արտացոլված են հայերենին հատուկ հնչյունափոխությունները: Բացի արդեն նշված միջանավորային *-t- առանձնային պայթականի անկումից, տեղ է գտել նաև *b^hr->-րբ- դրափոխությունը (համեմատել հայ. սուրբ «մաքուր, սուրբ» և սամսկրիտ śubhra- «փայլուն, գեղեցիկ»): Այսպիսով՝ ստացվում է վաղնջահայերեն *րբահր, որն ել երկու -ր- հնչյուններից առաջինի տարնմանությամբ (հմնտ. *saravart-> սաղաւարտ) դառնում է *ղբայր: Քանի որ հայերենում բառը չի կարող սկսվել ու կամ դ ձայնորդներով, *ղբայր ձևի բառասկզբում

առաջ է գալիս այսպես կոչված նախահավելվածային կամ հենարան ե- ձայնավորը, և ստացվում է եղբայր:

Այս փոքրիկ էքսկուրսն էլ բավական է ցույց տալու, որ հայերենը սովորական դրւստր լեզու է, ինչպես մյուս բոլոր հնդեվրոպական լեզուները՝ սանսկրիտը, հունարենը, լատիներենը, իռլանդերենը, իսլանդերենը, ռուսերենը և մյուսները. հնչյունական զարգացումների ուղղությունն ակնհայտորեն մատնանշում է հայերեն ձևերի երկրորդային՝ ածանցյալ բնույթը: Ակնհայտ է, որ բերված օրինակներում ցեղակից լեզուների *-թ- պայթականի դիմաց հ-, և *-է- պայթականի դիմաց -լ- կամ զրոյական արտացոլում ցուցաբերող հայերեն ձևերը չեն կարող նախնական լինել: Յայերենը ոչ մի կերպ չի կարելի հանարել մյուս ցեղակից լեզուների մայր: Կատարյալ տգիտություն է նաև Ար դիցանվան տեսությունը: Ար անվամբ Արևի Յայր աստվածության պաշտամունքի վերաբերյալ ոչ մի վկայություն հայտնի չէ: Այդ անգոյ դիցանվան կապակցումը միմյանց հետ ստուգաբանական կապ չունեցող արեւ, արարիչ, արի, Արամազդ, Արարատ (և այն էլ՝ որպես արարման վայր), Յարք և բազմաթիվ այլ բառերի հետ գիտական ոչ մի արժեք չունի: Նշենք, որ արեւ (սեռ. հոլ. արեգ < *արեգ-ի->) բառի միակ ցեղակիցը սանսկրիտ ravi- «արև» բառն է, հետևաբար արմատն է *(h₂)rew-i-: Ակնհայտ է, որ հայերեն ձևի բառասկզբնային ա- ձայնավորը նախնական չէ, և ԱՐ արմատի մասին խոսք լինել չի կարող: Յայերեն արար-ը արեւ-ի հետ բացարձակապես ոչ մի առնչություն չունի. այն առնեմ բայի հնդեվրոպական *հ₂er- արմատի կրկնավոր անցյալ կատարյալի հիմքն է և հստակ զուգահեռ ունի հուն.άρարίսկա, առո.՝ յրարօν ‘to fit, equir’ բայի մեջ: Նույն կերպ կապ չունի նաև արի ածականը. այն ածանցված է այր «տղամարդ» բառից, որ նույնպես հնդեվրոպական մի այլ արմատի ժառանգ է: Արամազդ-ը իրանական փոխառություն է: Եվ այսպես շարունակ: Ինչ վերաբերում է հայերին արիացիների հետ նույնացնող «տեսությանը», ապա դա պարզապես անմտություն է. aryā-ն որպես էթնոնիմ վերաբերում է միայն հնդիրանական ժողովուրդներին. հայերի հետ առնչվելու մասին ոչ մի վկայություն չկա:

Նախամայր լեզուն խոսվել է աշխարհագրական որոշակի տարածքում՝ «հնդեվրոպական նախահայրենիքում» (որի տեղայնացումը վիճահարույց է), և սկսել է տրոհվել մոտ 6-7.000 տարի առաջ, իսկ ըստ այլ տեսակետի՝ մի քանի հազարամյակ ավելի վաղ: Յասկանալի է, որ տրոհմանը նախորդած ժամանակաշրջաններում հայերենի, հունարենի, հնդկերենի կամ որևէ այլ հնդեվրոպական լեզվի գոյության մասին խոսք լինել չի կարող: Այդ ժամանակ կար միայն հնդեվրոպական նախալեզուն, իսկ այլ տարածքներում՝ մյուս լեզվաընտանիքների նախալեզուները՝ սեմա-քանյան, քարթելական, խուռա-ուրարտական, դրավիդյան և այլն:

Հասկանալի է, ուրեմն, որ հայոց լեզվի ակունքները թաղված են հնդեվրոպական անցյալում: Հայերենի ամենահին բառերն ու քերականական ձևույթները և մշակութային իրակությունները սերում են հնդեվրոպական արմատներից, ուստի դրանք չեն կարող դիտարկվել մայր լեզվից ու նրա մյուս ժառանգներից անկախաբար: Յետևաբար հնդեվրոպական լեզվաբանության կարևորությունը հայոց լեզվի ու մշակույթի ակունքների ուսումնասիրության համար դժվար է գերագնահատել: Յնդեվրոպական և հայկական լեզվաբանությունը 19-րդ դարի առաջին կեսից մինչև մեր օրերը գիտնականների մի ստվարաքանակ համաստեղության ջանքերի շնորհիվ կարողացել է իրագործել նախալեզվի քերականական համակարգի, բառամբերքի ու մշակութային համակարգի մի հիմնական մասի վերակազմության և դրանից ածանցված առանձին լեզուների՝ հայերենի ու մյուսների զարգացման մեխանիզմների մշակման բարդ աշխատանքները:

Այս ամենից պարզ է դառնում, որ ծայրահեղորեն անհեթեթ են այն պնդումները, թե հայերենը 40.000 տարեկան է, դրախտի լեզուն է և այլն: Եթե նույնիսկ ընդունենք հնդեվրոպական նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհում կամ մերձակա տարածքներում տեղակայելու վարկածները, ապա դրանից ՈՉ ՄԻ ԿԵՐՊ ՉԻ ԿԱՐՈՂ ՅԵՏԵՎԵԼ, որ հայերենը հնդեվրոպական մյուս բոլոր լեզուների նկատմամբ գերակա դիրք է գրավում: Հայերենը, իհարկե, անփոխարինելի ոեր ունի հնդեվրոպական նախալեզվի ու նախամշակույթի վերակազմության գործում, իսկ որոշ հարցերում (օրինակ՝ կոկորդայինների ու գլոտտալների տեսությունների) իսկապես բացառիկ կարևորություն ունի: Սակայն ընդհանուր առմամբ նա շատ ավելի քիչ նյութ է տրամադրում այդ գործում, քան խեթերենը, սանսկրիտը, ավեստերենը, հունարենը, լատիներենը և մի շարք այլ լեզուներ: Գուցե տարօրինակ թվա, բայց նույնիսկ լիտվերենը, որի գրավոր մշակույթը հայերենից երիտասարդ է ավելի քան հազար տարով, բազմաթիվ էական հարցերում շատ ավելի արխակ է ու կարևոր նախալեզվի վերակազմության համար: Ինչ վերաբերում է հայերենի գրավոր ժառանգությանը, ապա այն, իհարկե, շատ հարուստ է, ինքնատիպ ու բարձրարժեք, բայց չի կարող համեմատվել սանսկրիտի, հունարենի ու լատիներենի ժառանգությունների հետ: Սիրել մայրենի լեզուն ու մշակույթը նշանակում է խոնարի կերպով ուսումնասիրել ու ճանաչել դրանք, ոչ թե տգիտաբար աղավաղել ու անմտություններ հերյուրել դրանց շուրջը: Հայոց պատմությամբ ու մշակույթով հպարտանալու շատ իրական հիմքեր ունենք, ու բոլորովին պետք չէ կեղծ արժեքներ ստեղծել ու անհեթեթ «տեսություններ» սարքել:

Նյութը պատրաստեց Սյունիքի հայագիտական հետազոտությունների կետրոնի գիտաշխատող Քրիստինա Աղամյան՝ բանասիրական գիտություններ դոկտոր Հրաչ Մարտիրոսյանի «ՔԱՐԱՀՈՒՆՁ- STONEHENGE. ԱՌԱՍՊԵԼԻ ՎԵՐՁ»-ը հոդվածի հիման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1893:
2. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան (ԱՀԲԲ) (2 հատորով), Երևան, «Հայաստան» հրատ., 1976 :
4. Աճառյան Յր., Հայերէն գաւառական բառարան. Թիֆլիս («Եմինեան ազգագրական ժողովածու», հտ. թ), 1913:
5. Բեգլարյան Գ., Ատլաս Հայաստանի և հարակից Երկրների, Երևան, «Նոյյան Տապան», (Atlas: Armenia and adjacent countries), 2007:
6. Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966:
7. Լիսիցյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1969:
8. Խալաթեանց Գ., Գիրք մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան, Մոսկուա, Տպարան Վարվառէ Գատցուկ, 1899:
9. Խաչատրյան Գ., Գրաբարի շարահյուսության ձեռնարկ, Կիրովական, Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ (ձեռագրի իրավունքով), 1989:
10. Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Յ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, 1986, հտ. 2, 1988, հտ. 3, 1991, հտ. 4, 1998, հտ. 5, 2001, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1986-2001:
11. Հայերեն արմատական բառարան(ՀԱԲ), 4 հատորով (2-րդ հրատ.), Երևանի համալսարանի հրատ., [1-ին հրատ. 1926-1935, 7 հատորով] 1971-79:
12. Հերունի Պ., Հայերը և հնագույն Հայաստանը. հիմքերը հայոց. արքաեօստղագիտություն, լեզվաբանություն, հնագույն պատմություն, Երևան, 2006:
13. Հիւբշնան Յ., Հին Հայոց տեղույ անունները. Հայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին ուսումնասիրութիւններով (s հման 1904-ից թարգմ. Յ. Բ. Պիլէզիկնեան), Վիեննա, Միհիթարեան տպարան («Ազգային մատենադարան» ԾԳ), 1907:
14. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմ. և ծնթ.), Երևանի համալսարանի հրատ., 1996:
15. Ղանալանյան Ար., Ավանդապատում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1969:
16. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Երևան (վերատպ. 1955-56 և 1983, Պէյրութ. «Սևան»), 1944-45 (ՀԲԲ 1-4):
17. Մակար Բարխուդարյան (Բարխուտարեանց), Արցախ, Ստեփանակերտ,

«Մունք», (օրիգ. հրատ.՝ Բագու., «Արօր»), 1995:

18. Մարգարյան Ալ., Գորիսի բարբառը, Երևանի համալսարանի հրատ., 1975:
19. Զալըխեան Յ., Քերականութիւն հայկազնեան լեզուի (հանդերձ փոփոխմամբք և յաւելուածովք աշխատասիրեալ ի Յ. Արսէնէ վ. Այտընեան), Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1885:
20. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծնթ. Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:
21. Փավստոս Բուզանդ, Յայոց պատմություն (բնագիրը ք. Պատկանյանի, թարգմ. և ծնթ. Ստ. Մալխասյանցի), Երևանի համալսարանի հրատ., 1987:

ԱՅԼ ԼԵԶՈՒՆՆԵՐՈՎ

22. Лисициан Ст., Кошун-даш. Мегалитическое городище в Сисиане (Зангезур). Академия Наук СССР XLV Академику Н.. Маррү. Изд. АН СССР, Москва, Ленинград, 1935:
23. Парсамян Э., О возможном астрономическом назначении мегалитических колец Ангелакота. Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներ. պրակ XLV , Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1985:
24. Martirosyan Hr., Etymological dictionary of the Armenian inherited lexicon. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series, 8) 2010.
25. New Redhouse Turkish-English dictionary, 1968.
26. Rahlfs Al., Septuaginta. Stuttgart: Deutsche Bibelgesellschaft, 1935.

ՅՈՂՎԱԾՆԵՐ

27. Լալայեան Ե., Սիսիան. Աիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Ազգագրական հանդէս. 3-րդ տարի, Գ գիրք, Թիֆլիս, 1898, Nr 1, էջ 105-272:
28. Խնկիկյան Օ., Սիսիանի Զորաքարերը, «Յայաստանի բնություն» ամսագիր, 1984, Nr 4, էջ 33-34:
29. Մարգարյան Ալ., Մի քանի տեղանունների մասին, ՊԲՀ, 1988, Nr 4, 123-130, 1988:
30. Զահորկյան Գ., Յայոց լեզվի ծագման մասին (մի գոքի առթիվ), Յայաստան, Nr 14, 22 հունվարի, 1991, էջ 3-4:

ԴԱՍԱՑՈՒՑԱՅԻՆ ԿԱՅՔԵԶԵՐ

31. Վահրապյան Վ. և Վահրապյան Մ., Բրիտանիա կղզու առաջին բնակչութերը եկել են Հայաստանից. «Ազգ» օրաթերթ, <http://www.azg.am/AM/20081018> :
32. Վահրապյան Վ., և Վահրապյան Մ., Քարահունջ հուշարձանի անվանման շուրջ.<http://lernci.livejournal.com/68672.html>, 2010
33. <http://www.etymonline.com/index.php?term=Stonehenge>.
34. Carahunge Voi e of Ameri a.mp4 <http://www.youtube.com/watch?v=VkAdkMIZIKA>; „Stars & Stones 2010 - Voi e of Ameri a”
http://www.youtube.com/watch?v=AuOxNyH9_GQ&feature=related.

ԱՍՓՈՓՈՒՄ

Սիսիանի և Անգեղակորի մերձակայքում գտնվող մեգալիթյան հուշարձանը երբեք չի կոչվել Քարահունջ, իետևաբար Stonehenge-ի անվան հետ համեմատությունն անհնաստ է: 1890-ականներին հիշատակված Ղոշուն-դաշ թուրքական անվանումից ավելի հին որևէ անվանում հայտնի չէ: Սա, իհարկե, ոչ մի կերպ չի կարող նշանակել, թե թուրքերը որևէ առնչություն ունեն այս հուշարձանի հետ: Ինչ վերաբերում է Զորաց-քարեր անվանմանը, ապա այն պարզապես Ղոշուն-դաշ-ի հայեցված տարբերակն է և պատմական հիմք չունի:

Քարահունջ-ը (հին վկայություններում՝ Քարունջ) սովորական տեղանուն է: Այդ անվանք հայտնի է չորս բնակավայր, որոնք ոչ մի առնչություն չունեն քննվող հուշարձանի հետ: «Խոսող քարեր» և «Քարափունջ» մեկնություններն անընդունելի են:

Քար-ունջ/Քար-ա-հ-ունջ տեղանունը կազմված է քար «քար» և ունջ «տակ» բաղադրիչներից և նշանակում է «քարի/ժայռի տակ» -հ- հնչյունն ամենայն հավանականությամբ ձայնավորների կցման տեղում առաջացած հորանջ է: Քարահունջի «տեսությունը» օրըստօրե աճում է ու վերածվում հակագիտական մի հսկա ու անճռունի թնջուկի՝ իր մեջ ներառելով Հերունու և այլոց ֆանտաստիկ անհեթեթությունները, ըստ որոնց հայերենը 40.000 տարեկան է և հնդեվրոպական լեզուների մայրը, հայ մշակույթը քաղաքակրթությունների մայրն է և այլն և այլն. կատարելապես հիմնագուրկ են ինչպես այդ, այնպես էլ Պորտասար-ի ու Ար աստծոն և մյուս «տեսությունները»:

Անհրաժեշտ է առաջ քաշել հուշարձանի պաշտոնական վերանվանման հարցը:

Քարահունջ անվանումն անընդունելի է, քանի որ այն անքակտելիորեն կապված է ծայրահեղորեն հակագիտական հիմնադրույթների մի թնջուկի հետ:

РЕЗЮМЕ

• Памятник эпоха меголита, находящийся в близи Сисиана и Ангегакота, никогда не назывался Караундж, поэтому сравнивать с именем Стоунхендж бессмысленно. Конечно, это ни в коей мере не означает, что турки не имеют никакой связи с этим памятником.

• Караундж-обыкновенное местное имя. Упомянутое в 1890гг. турецкой название Кошун-даш не имеет более старых названий “подконтролем”. Под этим именем известно четыре населенных пункта, которые не имеют ничего общего с исследуемым памятником. “Говорящие камни” и “карапундж” интерпретации не приемлемы....

• Карундж название состоит из, “кар” и , “ундж” и означает “камень/ скала тепло”. Звук *h* по всем вероятности на месте связи гласных образовался звук. Караундж “теория” каждый день растет и превращается в гиганта. Геруни и другие считают, что армянскому языку 40.000 тысяч лет, в зависимости от языка и мать культуры индоевропейских языков, армянский язык мать цивилизаций, и так далее... это совершенно необоснованно, а также Бог Ар и Портасар и другие теории официально бессмысленны.

• Необходимо оставить вопрос об официальном переименовании памятника. “Караундж” имя неприемлемо, поскольку оно неразрывно клубком связано с антинаучными основами.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օնիկ Խնկիկյան	
ՄԻ ՀՈՒՐԾԱՐՁԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	3
ՍԻՍԻԱՆԻ ԶՈՐԱՔԱՐԵՐԸ.....	12
Պարիս Հերունի	
ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ.....	16
Մհեր Քումունց	
ԱՆՁԿԱՅՔ-ՔԱՐԱՀՈՒՆՉ.....	26
Վաչագան Վահրապյան, Մարինե Վահրապյան	
ԱՆԳՈՒ ՔԱՐԱՀՈՒՆՉ.....	30
Հրաչ Մարտիրոսյան	
ՔԱՐԱՀՈՒՆՉ- STONEHENGE. ԱՌԱՍՊԵԼԻ ՎԵՐԶ.....	36

ԶՈՐԱՅ ՔԱՐԵՐ - ՔԱՐԱՀՈՒԶ

Սյունիքի հայագիտական հանդես № 8

Գլխավոր խմբագիր՝	Մ. Զիլֆուղարյան
Տեխնիկական խմբագիր՝	Ք. Զիլֆուղարյան
Պատասխանատու խմբագիր՝	Ք. Ադամյան
Համակարգչային շարվածքը՝	Խ. Պետրոսյանի
Համակարգչային ձևավորումը՝	Ա. Գրիգորյանի

Տպագրվել է «Գրիգոր Տաթևացի» ՍՊԸ տպարանում :
Տպագրությունը օֆսեթ եղանակ Հանդեսի խմբագրություն՝ ք.
Գորիս, Մաշտոցի 3, ԱՀՀԿ հեռ.՝ 0284 24408,

Syuniqihayagitakankentron@mail.ru